


ԱՊՐԻՍ ՓԵՍԱՎ

ԲԱՐՈՅԱԼԻՑ ՏՐԱՄԱ-ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Յ ԱՐԱՐ

ՀԵՂԻՆ Ա.Կ



891.99

Ծ-60

L. ՇԻՇՄԱՆԵԱՆ

1937

Տպարան ՆԵԳ. Ա. Գ. Գ. Գ. Գ. Գ.

6 NOV 2011


391-99

С-60

ՀԱՅ ԱՊՐԻՍ ՓԵՍԱՍ

ԲԱՐՈՎԱԼԻՑ ՏՐԱՄԱ-ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ Յ ԱՐԱՐ

ՀԵՂԻՆԱԿ



Լ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

6046

1937


Տպարան ՆԵՂՈՍ Գանիք

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱԿԱՐ ԳԸՄԳԸՄԵԱՆ	Համես վաճառական
ԱՆՁԻՏ	Մակարի դուստրը
ՍԵՐՈՒ ԳԸՄԳԸՄԵԱՆ	Մակարի եղբայրը
ԹՈՐՈՍ	Գըմգըմեաններու ծառան
ՎԱՐԴՈ ԿՈՐԿՈՏԵԱՆ	Անահիտի սիրահարը
ՏՕՔ. ՍԱՐԳԻՍՈՑ	Վարդօի տան բժիշկը
ՄՈՒՇԵԼ	Դեղագործ
ՏԵՐ ՄԱՐԳԱՐ	Թաղին բանանան
ԱԲՐԱՀԱՄ	Ժամակոչ
ԹԱԳՈՒՀԻ	Թորոսի նշանածը

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐՍ. ԻՌԱ. ԻՌԱ. ԱԿԱ. Ա. ՈՒՆԵՆՈԼ



111 73-57

ՃԱՏ ԱՊՐԻՍ ՓԵՍԱՍ

Ա. ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնի. Մակար Գըմգըմեանի տան մէջ, համեստօքնի կահաւորուած սրան մը: Ազ ու ձախ ու խորը դուռներ եւ աջ կողմը պատուման մը:

ՏԵՍԻԼ Ա.

ԱՆ Ա. Հ Ի Տ - Ս Ե Ր Ո Բ

ՍԵՐՈԲ. (Անահիտի, որ թիկնարոնի մը վրայ նստած կ'արտասուե) Ա. լ բաւական է աղջիկս, այնքան լացի՛ր որ վերջապէս զիս ալ յուզեցիր: Տղայ մի ըլլամը և ինձի մտիկ ըրէ: Ես ամէն բան պատրաստած և ամէն զոհողութիւն ըրած եմ քու երջանկութեանդ համար: Անէջ. երջանկութիւն: Այս պայմաններուն տակ ինչպէս կ'ուղես որ երջանիկ ըլլամ, հօրեղբայր: Զե՞ս տեսներ հայրս որքան կը հակառակի:

ՍՐԲ. Ախ, եթէ ողորմածնոգի մտյրդ ողջ ըլլամ, այս գործը մինչեւ տատեղուանքը չէր հասներ:

Անէջ. եթէ փողացային մէկը ընտրած՝ կամ անարժան մէկու մը կապած ըլլայի սիրտս, այն տաեն հայրս իրաւունք կ'ունենար: Բայ' հարեղբայր, յանցանք է ըրածս:

ՍՐԲ. Ի՞նչ ըսկմ աղջիկս. ըրածդ սխալ բան չէ,

Բայց հայրդ տիք գլուխ մարդ է։ Նորէն կը կրկնեմ,
դուն անհոգ եղիր, ևս այս գործը պիտի կարգադրեմ։
Եղբայրս անանկ տիւպառայի մը պիտի բերեմ։ որ
հարուստը ուրկէ գալը ինքն ալ չպիտի հասկնայ։

Անչ8. (Ուրախ) իրա՞ւ կ'ըսես հօրեղբայր։ Ա՛խ,
եթէ կարենայիր հայրս համոզել և գործը յաջողցնել,
այն ատեն կետնքիս մինչև վերջին օրը երախտապարտ
կ'ըլլայի քեզի։

Սրբ. Աս ի՞նչ խօսք է Անտահիտ։ Արախտապարտ
ի՞նչ ըսել է։ Մենք օտարներ չենք։ եղբօրս աղջիկը
իմ ալ զաւակս ըսել է։ Այս գործը գլուխ հանելը իմ
պարտականութիւնն է և ան ալ ինպաստ քեզի։

Անչ8. (Զօրեղբօր վիզը փարբուելով) Ա՛խ հօրեղ-
բայր, որքան բարի ես։ Կը յուսա՞ս որ պիտի յա-
ջողիս։

Սրբ. Հարկաւ պիտի յաջողիմ։ «Տինսիզին հագ-
կընտան իմանուըզ կէլիր» կ'ըսեն։ Մենք աս մազերը
տէլիրմէնը չի ճերմկցուցինք։ Միայն աղջիկս քիչ մը
համբերէ և գոն պիտի մնա։

Անչ8. (աւելի մտերմիկ) Բայ հօրեղբայր, Վարդօն
գեղեցիկ երիտասարդ չ։

Սրբ. Թէ գեղեցիկ է եէ թէ խելացի։ (Կատակի-
լով) Եթէ ես ալ աղջիկ բլլայի, առանց վարտնելու
զինքը ամուսին կ'ընտրէի։

Անչ8. Հայրս կ'ըսէ թէ ձկնորսի աղայ է եղեր և
մեր ընտանիքին մնա կազմելը մեզի մհծ անպատճեռ-
թիւն։

Սրբ. Աս ի՞նչ պարապ խօսք։ Ձկնորսի աղայ ըլ-
լութ ամօթ է։ Եթէ պատմութիւնը խառնենք և նոյն
իսկ եթէ այսօրուսն մհծ գէմքերը նկատի ունենանք,
պիտի առանենք որ շատերուն հայրերը կամ ձկնորս,
կամ երկաթազործ, կամ լրագրավաճառ և կոմ շատ
պարզ ու աղքատ մարդիկ եղած են։

Անչ8. Ա՛խ ո՞ւր էր թէ հայրս ալ քեզի պէս մը-
տածէր։ այն ատեն ամէն դժուարութիւն կը հարդուէր։

Սրբ. Մի՛ մտահոգուիր Անտահիտ։ Քանի որ ես
ողջ եմ, այս գործը անպայման պիտի կարգադրուի։

Անչ8. Իսկ եթէ չկարգադրուի, այն ատեն վանք
մը քաշուելով բոլորովին Աստուծոյ պիտի նուիրուիմ։

Սրբ. Համբերէ տեսնենք։ Կենթ բաներ մոածե-
լու պէտք չունիս։ Կարծեմ երջանկութեան օրը շատ
հեռու չէ։ Մի՛ ատիպեր զիս որ ամէն բան քեզի բա-
ցարեն։ Աս գործը պիտի ըլլայ ըսի լմացաւ գնաց։

Անչ8. (Ուրախուրեամբ հօրեղբօրը երեսները համ-
բուրելով) Ուրախութենէս հիմա պիտի խենթենամ։
Սրբ. Հիմա քեզի կարեւոր ըսելիք մը ունիմ։
Քանի մը ժամուտն համար, պէտք է դուն աս տունէն
հեռանաս։

Անչ8. Ինչո՞ւ հօրեղբայր։

Սրբ. Ինչո՞ւ և այն չկայ։ Այդպէս պէտք է։ Տեղ
մը մտածէ ու գնա՞։ Յետոյ, մինչեւ որ ես չի գամ քեզ
առնելու, տեղէդ մի շարժիր։

Անչ8. Ո՞ւր կրնամ երթալ։

Սրբ. Տեղին խըթլընը չիկայ եա։ Անժէլին գնա։
Արդէն երէկ դէմս ելաւ եւ քեզի հարցուց։

Անչ8. (Քառուելով) Հօրեղբայր, բան մը կրնամ
հարցնել։

Սրբ. Ի՞նչ կայ աղջիկս, ըսէ տեսնեմ։

Անչ8. Այսօր տօ՞ն է։

Սրբ. Ինչո՞ւ հարցուցիր։

Անչ8. Որովհետեւ այսօր Վարդօն գործի չէ գա-
ցած։ Ճիշդ ժամ մըն է որ պատուհանին առջեւ նստած
հոս կը նայի։

Սրբ. Այո՛, հրէից տարեգլուխ է։ Պանքաները և
հրէական բոլոր հաստատութիւնները դոց են։

ԱՆՀՏ. Ես ալ կը մտածէի թէ արդեօք հիւանդ է:
ՄՐԲ. Դող մելլար աղջիկս : Առատուն կանուխ
զի՞նքը տեսայ . բիժամայով պալքօնը նստած թերթ կը
կարդար կոր :

ԱՆՀՏ. Ուրեմն հօրեղբայր , ես հիմա ի՞նչ պէտք է
ընեմ :

ՄՐԲ. Գլխարկդ գրածիդ պէս Անժէլին կ'երթաս :

ԱՆՀՏ. Իսկ ցերեկուան ճա՞շս ...

ՄՐԲ. Եթէ ուշանամ հնն կը ճաշես :

ԱՆՀՏ. Ուրեմն երթամ պատրաստուիմ (աջի սեն-
եակը կը մտնէ):

ՄՐԲ. (առանձին) Խեղճ աղջիկ : Այս օրերս որքան
ալ նիւարցաւ : Եթէ այսպէս շարունակէ , կը վախնամ
որ անկողին իյնայ : Բայց ո՞չ , այս աղջիկը պէտք է
գոհացում գտնէ : Ամէն բան աչքս առած եմ , միայն
թէ ծրագիրս յաջողէր :

ԱՆՀՏ. (մտնելով) Ահա հօրեղբայր , գլխարկս գրի
ու անմիջապէս կը մեկնիմ :

ՄՐԲ. Լաւ . ցտեսութիւն աղջիկս :

ԱՆՀՏ. Ցտեսութիւն հօրեղբայր : (Երեսները ույի-
լով) Խոստումդ չի մոռնաս իմ անուշիկ հօրեղբայրս :
(կելլէ):

ՄՐԲ. (առանձին) Սիրելը ի՞նչ գժուար բան է ե-
ղեր : Կարծեմ սիրել և չսիրուիլը աւելի գժուար է :
Ի՞նչ և իցէ , գոյնէ ես կեանքիս մէջ ոյզ գժբախտու-
թիւնը չունեցայ : Ո՞չ սիրեցի և ոչ ալ սիրուեցայ :
Թորոսը ո՞ւր է արդեօք , ժամ մըն է մէջտեղ չի կայ :
(Մէջտեղի դուռնին կանչելով) Թորո՛ս , Թորո՛ս :



ՏԵՍԻԼ Բ.

ՍԵՐՈԲ - ԹՈՐՈՍ

ԹՐՍ. (դուրսէն) Հրամայէ էֆէնտիս :

ՄՐԲ. Քիչ մը հոս եկուր :

ԹՐՍ. (դուրսէն) Շատ աղէկ :

ՄՐԲ. Աս ալ ճամբենք որ գլուխնիս հանդարա

ԷԼԼԱՅ:

ԹՐՍ. (մտնելով) Ի՞նչ կը հրամայէք էֆէնտիս :

ՄՐԲ. Դուն անցեալ օր մէկ օրուան արձակուրդի
մասին խօսած էիր : Այդ արձակուրդը այսօր կրնաս
առնել :

ԹՈՐ. (ուրախ) Իրա՞ւ կ'ըսէք : Շնորհակալ եմ է-
ֆէնտիս : Աս ի՞նչ հրաշտալի զուգագիպութիւն . Աս-
տուծմէ մալ ուղելու էի : Այսօր ես ալ բարեկամներէս
մէկուն տունը հրաւիրուած էի , աղջիկ մը տեսնելու
համար :

ՄՐԲ. Դեռ այդ գաղափարին վրա՞յ ես : Վազ ան-
ցիր Աստուծդ սիրես սա ամուսնութիւնէն :

ԹՈՐ. Ի՞նչո՞ւ վազ անցնիմ էֆէնտիս : Աստուծոյ
կամքը թող օրհնեալ ըլլայ : Սուրբ գիրքը կ'ըսէ : «Ա-
ճեցէք և բազմացարուք» :

ՄՐԲ. Քանի որ Սուրբ գիրքը այդպէս կ'ըսէ , ա-
ռանց վայրկեան մը կորսնցնելու աճէ' և բազմացիր :

ԹՈՐ. Եթէ չպիտի կարենամ ինծի համար բոյն
մը շինել , ի՞նչ կ'արթէ ուրեմն այս չարչարանքս :

ՄՐԲ. Ըսել է անպայման կ'ուզես ամուսնանալ :

ԹՈՐ. Հարկա՞ւ էֆէնտիս : Ամուսնութիւնը լու-
բան է : Կին մը ունենալ , ձագուկներու տէր գառնալ ,
մանաւանդ իրիկուները յոգնած գագրած տուն երթալ
և մատամային հետ զէմ զէմի քանի մը հատ կոնծել ,
ի՞նչ քէյֆլի բան :

ՍՐԲ. Պռավօ՛ Թորոս: Երբեմն լաւ տրամաբանուած խօսքեր ունիս, բայց երբեմն ալ ապուշ բաներ չատ կ'ընես:

ԹՐԱ. Ներողութիւն էֆէնտիս, մարդս կատարեալ չի կրնար ըլլալ: Եթէ մէկ կողմս ապուշ չըլլար, փոխանակ ծառայ ըլլալու, այսօր կամ նախարար, կամ առնուազն մեծ հաստատութեան մը անօրէնը կ'ըլլայի:

ՍՐԲ. Լա՛ւ, լա՛ւ: Քանի որ աղջիկտես պիտի երթաս, առ առ յիսուն դրուշը, թող քովդ մնայ. կարելի է բացառիկ բանի մը պէտքը կ'ունենաս:

ԹՐԱ. (Դրամբ աւնելով) Շնորհակալ եմ էֆէնտիս: Աստուած ձեզի երկար կեանք պարգեւէ: Հայր Արքահամին պէրէքէթը քէսէներնուադ մէջը ըլլայ:

ՍՐԲ. Շնորհակալ եմ:

ԹՐԱ. Ուրեմն կրնա՞մ մեկնիլ պարոն Սերոս:

ՍՐԲ. Այս՛: Եթէ գիշերը չվերադառնաս, վաղը առաւօտ կանուխ եկուր:

ՏԵՍԻԼ Գ.

ՍԵՐՈԲ (յետոյ) ՄԱԿԱՐ

ՍՐԲ. Աս ալ եղաւ: Հիմա անցնինք ամենէն կարեւորին: (Աջ կողմի պատուհանին մօսենալով, մեկու մը «Է՛ մը սպասէ»ի նեանը կ'ընէ): Արդեօք հասկցա՞ւ ըստածս... հարկաւ հասկցաւ. ստանային ջարըին հագցընող մարդէ: Եղբայրս ո՞ւր մնաց. կէս ժամէն կը վերադառնամ ըստաւ. ինչո՞ւ ուշացաւ արդեօք: Թործերը տակնութիւն են. խեղճին խելքը գլուխը չէ: Աս ամենուն վրայ խոչորկէկ սարըին մըն ալ մենք պիտի փաթթենք գլխուն: (ոսքի ձայն) Կարծեմ ինքն է: (Սակայ կը մտնէ) Ո՞ւր մնացիր եղբայր, ինչո՞ւ ուշացար:

ՄԿՐ. Փաստաբանին հետ բաւական առինք աըւ-
շինք: Քիչ մնաց որ հետը փորձանքի պիտի մտնայի: Արդարութիւն չէ մնացեր աշխարհիս վրայ: Մինչեւ
հիմա ավուճով դրամս առաւ և դեռ համարձակու-
թիւնը ունի այսօր ինծի ըսելու թէ՛ եթէ գործը այս-
պէս ընթանայ, այն ատեն դատերնիս կը կորսուի:
Քանի որ տառնկ էր, ինչո՞ւ ստանձնեց գործը: Եթէ
դատի մը ամէն մանրամասնութիւնները նախատեսե-
լու կարողութիւնը չունի, ինչո՞ւ փաստաբանութիւն
կ'ընէ. թող երթայ խասապութիւն կամ պախալու-
թիւն ընէ:

ՍՐԲ. Կը տեսնեմ թէ բաւական սրտնեղած ես եղ-
բայր, անոր համար հիմա մանրամասնութեան պիտի
չի մտնեմ հետդ:

ՄԿՐ. Աւելի լաւ: Ո՛չ գուն հարցուր և ոչ ալ ես
պատասխանեմ: Արապ սաչի գործ մը. մէջէն ելլուե-
լիք բան չէ:

ՍՐԲ. Է՛նչ պիտի ընես, պիտի համբերես: Եւ
յետոյ, հիմակուընէ այդքան յուսահատելու պէտք
չունիս, քանի որ դեռ չես գիտեր թէ գործը վնրջ-
նականապէս ինչ գոյն պիտի ստանայ:

ՄԿՐ. «Էկօրիւնէն քէօյ գըլավուզ իսթէմէզ» կ'ը-
սէ տաճկերէն առածը: Քանի որ ստանկ քեաղըտ խա-
վագիի մը ձեռքը ինկեր ենք, հապը կըլլեցինք ըսել է:

ՍՐԲ. Փոխէ փաստաբանդ եղբայր, քանի որ շատ
ուշ չէ դեռ:

ՄԿՐ. Աս ալ մտածեցի. բայց ատիկա ալ ընելու
համար նորէն դրամի պէտք կայ: Քանի մը հարիւր ոսկի
ալ ուրիշին ա՞փը դնենք, կրկին այր բեն գիմի սկսե-
լու համար:

ՍՐԲ. Բայց անձարակ փաստաբանի մը խաթերը
համար, քանի մը հազար սոկի կորսնցնելն ալ խելացի

գործ մը չէ կարծեմ։ Ի՞նչ որ ալ ըլլայ, խոհեմութիւնը կը պահանջէ որ երկու չարեաց փոքրագոյնը ընտրուի։

ՄԿԲ. Այս ամենը չէր բաւեր, մէյ մըն ալ այսօր դէմս ո՞վ ելլայ աղէկ։

ՄՐԲ. Ո՞վ։

ՄԿԲ. Վարդօ ըսուած խայ ռառակը։ Փողոցին անկիւնը կեցած, կովի պէս երեսս կը նայէր կոր։ Հաւատայ Սերոք, եթէ սա տունը սեփականութիւնն ըշլւար, անմիջապէս ձգելով ուրիշ տեղ մը կը փոխադրուէի։ Եթէ ճէճէննէյ երթալ պէտք ըլլար, կ'երթայի, այդ անօրէնին ձեռքէն ազատելու համար։

ՄՐԲ. Ի՞նչ օգտակարութիւն կրնայ ունենալ տուն փոխելը, քանի որ երթալիք տեղերնիս ալ կրնայ գուէ, Քիչ մը խոհեմ ըլլանք եղբա՛յր և այս գուծին ճար մը մտածենք։

ՄԿԲ. Ի՞նչ... բանեմ աղջիկս իրե՞ն տամ, լսողը ի՞նչ կ'ըսէ։ Մակար Գըմգըմնոն մը, ձկնորսի մը զաւակը փեսայ ասնէ... նե՞րտէ պու պօլլըք։

ՄՐԲ. (նեմելով) Խօսելիք շատ բան կայ, բայց ի՞նչպէս ըսի, հիմա սիրտդ նեղուած է։ ուրիշ օր մը հարկաւ կը տեսնուինք այս մտաին։

ՄԿԲ. Ի՞նչ որ ալ ըլլայ, որոշումս որոշում է։ Պանքայի ճինդ փարանոց պաշտօնեայ մը ի՞նծի փեսայ չի կրնար ըլլալ։

ՄՐԲ. (պատուհանն «Եկու»ի նեան կընէ) Առաջին անգամը չէ որ կը վիճաբանիք այս մտաին։ Ես քույսմառ բնաւորութիւնդ լսւ կը ճանչնամ։ Միայն սա չափը ըսեմ որ, ուեէ գործի մէջ, բարկութեամբ ճամբայ ելլողը, միշտ վնասով դուրս կ'ելլէ։ Աս հազարաւոր ոսկիներուն պարագան ալ նոյնը չէ միթէ։ Ահա՝ այսօր փաստաբաներու քմահաճոյքին իւաղալիկ

գործած ես։ Քեզի քանի քանի անգամներ խորհուրդ տուի, զգուշացուցի և նոյն իսկ աղաչեցի որ չի մըտնես այդ գործին մէջ, բայց անօգուտ։

ՄԿԲ. Նորէն հին վէրքերը մի բանար։ իմ տէրտս ինծի բաւական է։

ՄՐԲ. Եթէ խորհուրդներուս անսայիր, այսօր այս սիրտանումները պիտի չունենայիր, Եղբայրներ չե՞նք միթէ։ Առեւտրական գործով թէեւ ուեէ կապ չունինք իրարու հետ, բայց քու նիւթական կամ բարոյական պղտիկ մէկ անկումդ ինծի մեծ ցաւ կը պատճառէ։

ՄԿԲ. Ասոր վստահ եմ. լսւ կը ճանչնամ քու բարի սիրտդ։

ՄՐԲ. Քանի որ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն ականջ չե՞ս գնեն ըստածներուս։ Զոր օրինակ, Անահիտի պարագան պղտիկ բան կը կարծես։ Ես շտա կը վախնամ որ այդ գործը օր մը մեր գլխուն փորձանք մը բերէ, կամ ընտանիքին պատիւը արատաւորէ։

ՄԿԲ. Ուզածդ ըսէ եղբա՛յր, բայց կ'աղաչեմ, ինծի այդ ամուսնութեան մտաին մի խօսիր երթեք։

ՄՐԲ. Ես արդէն խօսելին ձանձրացայ։ Ասկէ ետքը ուզածդ ըրէ։

ՄԿԲ. Ուր է Անահիտը։

ՄՐԲ. Անժէլին գնաց։ Կարելի է ցերեկին ալ հոն կը ճաշէ։

ՄԿԲ. Թորո՞ուը ...

ՄՐԲ. Ան ալ, գիտես ա, շտրաթ մըն է գլուխ կ'ուռեցներ կոր, այսօր աղատ ձգեցի, ելաւ գնաց։ Աղջիկտեսի պիտի երթայ եղեր։

ՄԿԲ. Աղէկ խալթ պիտի ուտէ։ Հէմ անանկ սէրսէմին ո՞վ աղջիկ կուտայ։

ՄՐԲ. Ան ալ իր այտրը բան մը կը դտնէ հարկաւ։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՎԱՐԴՈ

ՎԱՐԴՈ. (ծայտուած եւ երկու վեցիարուածներ ի ձեռին, կատաղօրէն մտնելով) Զեռքերը վե՛ր:

ՄԿՐ. և ՍՐԲ. (լեղապատառ) Աս ո՞վ է:

ՎՐԴ. Զեռքերը վե՛ր կ'ըսեմ ճեղի. ապա թէ ոչ կը կրակեմ: (երկուն ալ սարսափահար, ձեռքերնին վեր կ'առնեն):

ՍՐԲ. (մեկուսի) Աս ի՞նչ անձանաչելիօրէն ծպողւեր է:

ՎՐԴ. (Մակարին) Անունդ ի՞նչ է:

ՄԿՐ. (կակազելով՝ խեղնուկ մը Սերոբին) Ի՞նչ ըստ:

ՍՐԲ. Անունդ կը հարցնէ կոր, շուտ պատասխանէ:

ՄԿՐ. (դողալով) Մակար ...

ՎՐԴ. Մականո՞ւնդ ...

ՄԿՐ. Գըմգըմեան:

ՎՐԴ. (Սերոբին) Իսկ քո՞ւկդ:

ՍՐԲ. Սերոբ ...

ՎՐԴ. Մականունդ:

ՍՐԲ. Գըմգըմեան ...

ՎՐԴ. Ազգական էք ուրեմն:

ՍՐԲ. Եղբայրս է:

ՄԿՐ. Այս' եղբայր ե՞նք:

ՎՐԴ. Դուն լոէ՛, շատ մի՛ խօսիր, միայն քեղի ուղղուած հարցումներուն պատասխանէ: Ամէն բանէ տռաջ ըսեմ թէ՛ ես չեմ եկած առւներնիդ թալլելու, կամ դրամնիդ չորթելու, այլ եկած եմ, որպէս պատուաւոր մարդ՝ պատուաւոր գործ մը կարգադրելու համար:

ՄԿՐ. (ցած ձայնով Սերոբին) Սերոբ, ըսէ այս մար-

Դուն որ պատուաւոր գործ մը, ասանկ երկու րէվօլ-վէրով չի կարգադրուիր: (մոռնալով, ձեռքերը վար կ'իջեցնէ):

ՎՐԴ. Զեռքերը վե՛ր: Եթէ պզափկ շարժում մը ը-նկս, կեանքդ վտանգուած է: Ո՞վ է ձեր երկուքէն Անահատի հայրը:

ՄԿՐ. Ես ...

ՎՐԴ. Վարդօ Կորկոսեան անուն մէկը կը ճանչնա՞ս:

ՄԿՐ. Այս', կը ճանչնամ:

ՎՐԴ. Ի՞նչ տեսակ մարդ է:

ՄԿՐ. Հիմա կ'ըսեմ: Բայց սպասեցէք որ քիչ մը շունչ առնեմ:

ՍՐԲ. (ցած ձայնով Մակարին) Աման եղբայր գէշ բան մը չըսես, երկու հասին մէջ տասներկու կա-պար կայ:

ՎՐԴ. (սպառնական) Պատասխանէ՛:

ՄԿՐ. (կակազելով) Այս այս' այս' այդ մարդը ... շատ մօսէն չեմ ճանչնար, բայց կ'ըսեն թէ լաւ մարդ է:

ՎՐԴ. Ուրիշին ըստածը օգուտ չունի. դուն ի՞նչ կ'ըսես:

ՄԿՐ. Ես իմ կողմէս բան մը չեմ կրնար ըսել:

ՍՐԲ. (մէջ նետուելով) Պատուական տղայ է: Ու-սումնական, զարդացած, պարկեշտ, համեստ պաշտօնի տէր, լաւ ապագայ խստացող:

ՎՐԴ. (Մակարին) Համաձա՞ն ես եղբօրդ ըստ-ներուն:

ՄԿՐ. (ակամայ) Այս' ...

ՎՐԴ. Վարդօն օրիորդ Անուհիաը կը սիրէ և օ-րիորդ Անոհիան ալ՝ վարդօն: Կ'ուզին ամուսնանալ իրարու հետ: կը թոյլատրե՞ս:

ՄԿՐ. Ի՞նչպէս կ'ուզէք որ թոյլատրեմ, երբ ամէն մարդ գիտէ թէ այդ տղան ձկնորսի մը զաւակ՝ և եր-կու փարանոց պաշտօնեայ մըն է:

ՎՐԴ. ԶԿՆՈՐՍԻ ՊԱԼԵՎԿ՝ ԿԱՄ ԱՊԱՀՄՈՆԿԵՐՋ ԸԼԼԱԼՇ
ԱԽԾԾ Է : Կ'ՈՒՂԵՍ ՈՐ ԱՊԱԳ-Ջ ՓԻԽՈՄՈՒԴ ԱՆՊԱՅՄԱՆ
ՄՐՔՄՅԱԿԱՆ ԳԵՐԳԱՍԱՄԱՆՆԷ ԱԵՐԱԾ ՄԵԿԸ, ԿԱՄ ՄԻԼԻՇՈՆԱ-
ՄԷՐ ԼՉՐԱ ՄԸ ԸԼԼԱՋ : ԴԻՌՆ ԻՆՉՈ՞ւ ԱԺՈՒՆԱԳԱՐ . ԻՆՉՈ՞ւ
ՔԵՂԻ ՄՊՂԻԿ ՄՈՆԵԲԻՆ, ՔԱՆԻ ՈՐ ԳՈՒՆ ՄԼ ՀՐՁՈՒՆ ԱԹԻ-
ՐԻՉԻ ՄԸ ՊԱԼԵՎԿՆ ԷԻՐ :

ՄԿՐ. (ԱՆԱԿԵՆԿԱԼԻ ԵԿԱԾ) ԱԽՄՈՒ Է . ԻՄ ՀԱՅՐԱ ՀԱ-
ՐՈՒՍԱ ՎԱՃՄՈՒՏԿԱՆ ԷՐ :

ՎՐԴ. ՍՈւԾ ԿԸ ԽՈՍԽԻԱ . ՀԱՅՐԴ ԱԹԻՐԻՉ ԷՐ և ՊՈՒՆ
աԼ ՄԻՆՈՐ ՀԱՐԱՊԱՄ ՊԱԼԵՎԿԸ : Բայց ՃԳԵՆՔ ՀԻՄՄ ԱՅՍ
ԿԵՆՍՈՎՐԱԿԱՆ ԽՈԹԵՐԸ և ՄԻՆԳԻՆՔ ԲՈՒՆ ԽԱՆԴՐՈՒՆ :
ԵՍ ԵԿԱԾ Եմ ՄԻՐԵԼԻ ԲԱՐԵԼԿԱՄԲԻՇ՝ ՎԱՐԴՈՓ Կողմէ, ԱՆ-
ՄԻՋԱՊԷՆ Նշանախօսութիւնը կնքելու համար : Եթէ
մերժողական պատասխանն առաջ, վայրկեանական կոր-
սուած ես :

ՄԿՐ. (Գած ձայնով սերոբին) ԱԱ Ի՞նչ ՄԱՐՈՐԻՆՈՒԿ
ԱՊԱԳՈՐԻ Է :

ՄՐԲ. Եթէ Կ'ՈՒՂԵՍ ՈՐ ԿԱՉԲԻՒԽ ՓՐԿԵՆՔ, Այո՛ ըսէ :

ՎՐԴ. Շատ ԱՊԱՏԱԿՈՒ ԱՏԵՆ ՀՈՒՆԻՄ . Այո՛ ԿԱՄ ո՛չ :

ՄԿՐ. (ԴՊՈՂԱԼՈՎ) ԱՍՈՒԾԱԾ ԻՄ, ԱԱ Ի՞նչ ՓՈՐԴԱՆ-
ՔԻ ՀԱՆԳԻՎԵՑՄՔ :

ՄՐԲ. (ՎԱՐԴՈՓԻ) ՀԱՄԱՃԱՐՆ Է ԷՓԷՆՄԻԽ :

ՎՐԴ. Ո՛չ, ՈՐԱԿԵՍ ՀԱՅՐ ԻՆՔ ԱԲԵՄՔ Է ԱՊԱՏԱՍԽԱՆՆ :

ՄՐԲ. ԽՈԱԿ' Եղբայր, ՎԱՐԱՆԿՈՒ ԺՈՒՄԱՆԱԿ չէ :

ՄԿՐ. Բայց ի՞նչպէս կորելի է ասանկ ԱՊԱՏԱՆ-
ԼԻՔԻ ՄՈՒԿ ԱՂՋԻԿ Նշանել :

ՄՐԲ. Զե՞ս աեսներ, կետնքերնիս մոզէ մը կախ-
ուած է :

ՎՐԴ. Դեռ կը ՎԱՐՈՒԻ ԲԱ : (ԱՏՐԵՆԱՆԱԿԸ ՇԱՐԺԵԼՈՎ)
Ի՞նչ է ԱՊԱՏԱՄԱՆՆ :

ՄԿՐ. (ԿՄԿԵՆԼՈՎ) Լոււ, ՀԱՄԱՃԱՐՆ ԻՄ :

ՎՐԴ. ԽՈԱՔՈՎ ՀԵԼՄՐ, ԳՈՒԾ ԱԲԵՄՔ Է :

ՄԿՐ. Ի՞նչ Կ'ԱԵՎԵՔ ՈՐ ընեմ :
ՎՐԴ. ԱՆԱԲԻԺԱՊԷՍ թուղթ մը պիտի ԱՍՈՐԱԳՐԻՆ :
ՇՈՒՄ, ԱԵՂԱՆԻԲԻՆ ԳԼՈՒԽԱԾ անցիր : (ՄԱԿԱՐ ԱԵՂԱՆԻԲԻՆ
առջեւ կը նասի) Դրէ ի՞նչ որ կ'ըսիմ : (ԱՏՐԵՆԱՆԱԿԸ ՄԱ-
ԿԱՐԻ ՈՂԽՈՒՆ մօՏԵՅՆԵԼՈՎ) Դրէ :

ՄԿՐ. Կ'ԱՂԱՆԵմ, ԱԱ ԱՄԱՐՃԱՆԱԿԸ ՔԻՀ մը ՎԱՐ
ԱՊԵՔ, ՈՐԱԿԵԱՂԻ ԿԱՐԵՆԱԾ ԳՐԵԼ :

ՎՐԴ. Դրէ, ՀԱՄ մի ԽՈՍԻՐ : ԱՍՈՐԱԳՐԻԿԱԼՍ ՄԱ-
ԿԱՐ ԴՐԱՋՐԱՄՆ (ՄԱԿԱՐ կը գրէ) ՆԵՐԿԱՅԻԿԱԾ ԿԸ ՅԱ-
ՄԱՐԱԳՐԻՄ թէ, Աղջկանս ԱՆԱՇԻՄԻ ՀԱՃՈՒԹԿԱՄԲԸ և
իմ յօժար ԿՈՄՔԱՂԱԾ, ՎԱՐՈՇ ՎԱՐԳՈ ԿՈՐԿՈՍԵԱՆԸ ՓԵ-
ՄԱՅ ԸՆԱՐԱԾ եմ : Եթէ ԹՈՒՄԿԱՆԽԱ մինչեւ մէկ ամիս
ՀԱՐԱՄՆԻՔԸ չի ԿԱՄԱՐՈՒԵԻ, ՎԱՐՈՇ ՎԱՐԳՈ ԿՈՐԿՈՍԵԱՆԻ
ՔՊՎԱ պահ առւած հաղար ոսկի հնչեւն դրամը, քսան
և չորս ժամուան մէջ իրեն վերագարձնելու պարտա-
ւոր եմ : ԱՍՈՐԱԳՐԵ : (ՄԱԿԱՐ ՏԱՏԱՄԱՆԵԼՈՎ կ'ԱՏՐԱ-
ԳՐԵ): Լոււ : (ՈԵՐՈԲԻՆ ՈՂՈՂՈՒԵԼՈՎ) Դուն ալ ՈՐԱԿԵՍ իր
եղբայրը և որպէս վկայ, դուն ալ ԱՍՈՐԱԳՐԵ այս
պայմանագիրը :

ՄՐԲ. (ՎԱՐԱՆԻԼ ՁԵԼԱԳԲԵԼՈՎ) Բայց ...

ՎՐԴ. Բայց մայց չկոյ . ԱՍՈՐԱԳՐԵ :

ՄՐԲ. ՇԱՄ ԱՂԵԿ : (կ'ԱՏՐԱԳՐԵ):

ՎՐԴ. (ԲՈՒՂԲԲ ԳՐԱՎԱՆԵԼՈՎ) Այժմ ես կը մեկնիմ,
ՊԱՐՈՒՆԱԿ'Ր, այս առթիւ կառավարութեան ո և է գի-
մում, կամ բարեկամներու տրուելիք ո և է մանրա-
մասնութիւն, կրնայ Ճեզի անպատճառքեր, կամ նոյն
խոկ վատնգաւոր դառնալ : Ուստի լուսթիւնը ամենէն
լոււագոյնն է : Թող գաղտնիքը մեր մէջը միայ :

ՄՐԲ. Բանի որ ի՞նգիրը այլեւս վերջացած է .
ԿՐՆԱՔԱՄԵՐԿՈՒ անհամոյ դործիքները գրավաննիդ գնել :

ՎՐԴ. Եթէ այսպէս չընէի, ՎԱՐԳՈՆ կրնար Ճեր աղ-
ջեկը փախցնել և սարսափելի դայթակղութեան մը
տեղի տալ :

ՄԿՐ. (Աչերք սրբով) Աստուած իմ, արդեռք ե-
րան է տեսածս:

ՍՐԲ. Երազ չէ եղբայր երազ չէ, գժբախտաբար
կատարեալ իրականութիւն է: Բայց կրկին փառք
տանք Աստուածոյ որ վաղուան արեւուն տաք ճառա-
գայթները վայելելու արժանի պիտի ըլլանք:

ՄԿՐ. Այսքան տարրուան մարդ, ասանկ բան ոչ
լսած էի, ոչ ալ տեսած: Կանկսթերեան նշանաիօսու-
թիւն, Ահա քս սներրորդ դարու յառաջդիմութիւննե-
րէն նմոյշ մըն ալ:

ՎՐԴԻ. Շնորհակալութիւն պարոններ: Ուրախ եմ
որ քիչ յոգնութեամբ նպատակիս հասայ: Ուրեմն թոյլ
տուէք որ մեծ հաճոյքով և անկեղծ երախտիւք, համ-
բուրեմ ապագայ աներ հօրս պատուական ձեռքերը:
(կեղծ մազը, մօռուէլ եւ վերակուն կը հանէ):

ՄԿՐ. (մեծ զարմանենվ) Վարդո...
ՎՐԴԻ. Այո՛, նոյն ինքը, Վարդո կորկուան,
Դըմքըմեան ընտանիքին տպագոյ փեսացուն:



ՎԱՐԱԳՈՅՐ

ԲԱԲԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.


PAPAZIAN & Co. (MUSIQUE)

Գահիրէ, 9 Մաղրապի փողոց

Աղեխանդրիա, 6 Փուաս Ա. փողոց

Հ Ե Ռ Ա Զ Ա Ց Ն Գահիրէ 54407

» Աղեխանդրիա 21780



AMERICAN-BOSCH

Կատարելագործուած եւ ամեն տեղ նամբաւուած

American-Bosch 1938ի ոատիօները

սաւյուած են:

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՑԻ 9


ԲԱԲԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

L. ՔԵՍԹԵՔԵԱՆ

ՎԱՀԱՌԱՏՈՒՆ

ՀՐԱՄԱՐԱԿ ԱԹԱՊԱ ԷԼ ԽԱՏՐԱ
Գրասենեակ եւ մրեւալոց՝ նախկին Թիրինեկ
վահառատան փողոցին մէջ:
Մասնաճիւղ՝ Ա.պտ-էլ-Ազիզ փողոյ թիւ 43:
Հեռածայն 52946

SVEA




Զեր սան համար SVEA մը անհրաժեշ է: Ան կը գերա-
զանցէ ամենէն աւելի հանչցուած մարքաներն իսկ:

Եզիստուի միակ ներկայացուցիչն է

L. ՔԵՍԹԵՔԵԱՆ

L. ԿՈՎԱՆԻԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ
ԵՐԿԱԹԵՂԵՆ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ



L. GOGANIAN

ԳԱՀԻՐՔ

Հեռածայն թիւ 59182

Նամակատուփ թիւ 211

ՄԱՄԱՍ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԿԵՐՊԱՍԵՂԵՆԻ

ԾԱՆՈԹ ՎԱՀԱՌԱՑՈՒՆ

ՄՈՒՍՔԻԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ ԹԻՒ 23

Հեռախայն 55742

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԸՆՏԻՐ ԵՒ ՃԱՇԱԿԱԽՈՐ

ԿԵՐՊԱՍՆԵՐԸ

ԱՅՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԵՆ ՓՆՏՈԵՑԵՔ

ՃՈՒ ԵՒ ՏՈԿՈՒՆ ԱՊՐԱՆՔ

ՄԻՇՏ ՕՔՔԱՋԻՈՆ

ՏԻՊԱՐ ՄԱՅՐԱՆՈՑ

ՏՕՔԹ. Գ. ՎԱՐԴԵՐԵԱՆ

77. ՌԵՆ Նազլի պողոտայ

Հեռածայն 50839

ՄԱՍՆԱԳԵՏ

ՄԱՆԿԱԲԱՐՁ - ՎԻՐԱԲՈՅԺ

«Քիջնէր» եւ «Հակար» հիւանդանոցներու

ԱՌԱՋԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԸՆՏՐՄԱՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ

Արանց եւ կանանց սեռային գործարաններու
հիւանդուրեանց արագ դարմանում, ելեքտրական
եւ վիրաբուժական գործողութիւններով:

Մայրերու եւ մանկիկներու մասնաւոր խնամք
վկայեալ ուրշենու միջոցաւ:

ԱՆԹԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

ԶԱՓԱԽՈՐ ԳԻՆԵՐ

Ընդունելուրեան ժամեր 10-12 կ. ա. եւ 4-7 կ. վ.

(բացի կիրակիներէ)

ԲԻԿՄԱԼԻՕՆ

Հայկական տիպար վաճառատուն

Pygmalion

Սեփականատէր՝ Կ. ՇԱ. ՃԵ. Ա. Ն.

Ֆուլաս Ա. փողոց Քօնքինանքալի շենքը

Հեռաձայն 58828

ԶԵՐՆՈՑՆԵՐ

ԿԱՆԱՆՑ ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐ

ՔՈԴՍԵՆԵՐ

Ամենէն դժուարահանն անզամ
երբ ոյս վաճառատունէն ներս մտնէ^ւ
զոհ դուրս կ'ելլէ:

= 17 =

ԱՐԱՐ Բ.

ՎԱՐԴՈՒԻ ՏՈՒՆԸ

ՏԵՍԻԼ Ա.

ՄԱԿԱՐ — ԱՆԱՀԻՏ — ԹՈՐՈՍ

ԱՆՀՏ. (Վարագոյրը բացուելուն, Մակար բեմին
աջ կողմը, բժամայով, թիկնարոնի մը վրայ նսած
քերը կը կարդայ: Անսինիս զլխարկով, մէջտեղէն կը
մտնէ: Թորոս իրեն կը հետեւի, ձեռքը հանի մը պղտիկ
ծրաբներով): — Ամենքն ալ սենեակս տար թորոս:

ԹՐՍ. Շատ լաւ տիկին: (Չախակողմեան սեն-
եակը կը մտնէ):

ԱՆՀՏ. Բարի լոյս հայր: Ինչպէս ես, լո՞ւ ես:
ՄԿՐ. Լաւ չեմ աղջիկս: Այս իրիկուն նորէն չի
կրցի քնանալ:

ԱՆՀՏ. Պատճա՞ռը հայր:

ՄԿՐ. Հարցնելու աւելորդ: Դուն լաւ գիտես թէ
այս վերջին վեց ամսուան ընթացքին, ի՞նչ նիւթա-
կան մեծ վիասներ ունեցայ և ի՞նչ տաղնապներ ան-
ցուցի:

ԱՆՀՏ. (Գլխարկը եւ ձեռնոյները սեղանին վրայ
դնելով). Այս՛, իրաւոնք ունիս հայր, ամեն բան
գիտեմ, բայց և այնպէս քու առողջութիւնդ մեղի
համար ամեն բանէ վեր է:

ԹՐՍ. (Մտնելով). — Ուրիշ հրաման մը ունի՞ք
տիկին:

ԱՆՀՏ. Ոչ թորոս:

ՄԿՐ. (Թորոսին) Ինծի լաւ թէյ մը պատրաստէ:

ԹՐՍ. Անմիջապէս տէր իմ. (Մէջտեղէն կ'ելլի):

ԱՆՀՏ. Դեռ չես նախաճաշած:

ՄԿՐ. Թորոսը թէեւ ըստ սովորութեան, այս

11173-57



առաւօտ ամեն բան սենեակո քերաւ, բայց նոյնու-
թեամբ վերալորձուցի: Ուտելու ախորժակ չիկոր:

ԱՆՀՅ. Հայր, շաբաթ մըն է արդէն՝ բան մը
կերած չունիս: Եթէ այսպէս շաբառնակն շատ պիտի
տուժես: Դուն սնունդի պէտք ունիս:

ՄԿՐ. Այո, ես ալ գիտեմ թէ սնունդի պէտք
ունիմ, բայց երբ ախորժակ չիկոյ, ինչպէ՞ս ծամելու
և ինչպէ՞ս կլելու է այդ պատասները.

ԱՆՀՅ. (Հօր երեսը ըովելով). Անուշիկ պապա՛ս,
ինչո՞ւ այդքան կը մտանզաւիս: Պրամական կորուսը
կարեւորութիւն չունի, խերն եմ անիծեր: Աստուած
հիւանդութիւն կամ ման չիտայ:

ՄԿՐ. Հսելը գիւրին է աղջիկս, բայց հաբըս-
տութիւն մը կորանցնելը շատ դժուար է: Գիտե՞ս թէ
այսօր ինչ ճակատագրական օր է ինծի համար. Սերոբը
դատարան գնաց: Վերաքննիչ տահանը այսօր իր վերջ-
նական որոշումը պիտի տայ: Եթէ նախնական դատա-
րանին վճիռը հաստատէ, վճացած ե՞ր... տուն մը ու-
նիմ, ան ալ ճեռքէս պիտի երթայ:

ԱՆՀՅ. Թող երթայ, հոգիդ ողջ ըլլայ: Տե՛ս,
Աստուած քեզի ուրիշ նոր տուն մը պարգևեց և
վարդօի պէս ալ փեսայ մը տուաւ: Յորչափ որ մենք
ողջ ենք, գուն համեստ կեանք պիտի շաբառնակն,
տունց բանի մը վրայ մտածելու:

ՄԿՐ. Շատ ազրիք զաւակներս:

ԱՆՀՅ. (Հօր երեսինը համբոււելով), կատակի ձեւի
տակ). Հայրիկ եթէ տունը ճեռքէդ ելլէ, կը վախ-
նաս որ մէկ հատիկ աղջիկդ տանց ժառանդի՞ կը
մնայ: Եթէ այդ է մոածումդ, ես այժմէն իսկ իմ ամ-
բողջ իրաւանքներէս կը հրահարիմ: Իմ միսկ ժա-
ռանդս թող քու օրհնութիւնը բլլոյ:

ՄԿՐ. Ահնամն աղջիկս, եկուր որ հոմբուրեմ
քեզի: (Կը համբուրէ):

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ — ԹՈՐՈՍ

ԹՐՍ. (Թեկին ափսէն ձեսքը կը մտնի). — Հո՞ս պի-
տի խմէք:

ՄԿՐ. Այո՛: (Թորոս ափսէն սեղանին վրայ կը դնէ):

ԱՆՀՅ. Լու չըլլա՞ր որ սենեակդ քաշուիս:
Կարծեմ հոն աւելի հանդիսան կը ընես:

ՄԿՐ. Ոչ աղջիկս, հոս աղէկ է: Մանաւանդ այս
ժամուս որ արեւը ճիշդ սենեակիս մէջն է:

ԱՆՀՅ. Այո, ամառ ըլլալուն, վարագոյրները
հանեցինք, բայց կրնանք փեղիկնը գոցել:

ԹՐՍ. (ցած ձայնով տիկինին). Փեղիկնը գոցելու
ինչ հարկ կայ: Յուսաբեր մը փակցուցէք պատու-
հանին, Արեւը խպառ ներս չի մտնար:

ԱՆՀՅ. — Թորոս, նորէն իսելքդ կորանցուցիր:

ՄԿՐ. — Հսածդ իմոցոյ ապուշ: Փոխանակ սրաւ
մտութիւններ ընելու. Քիչ մը խելքդ գլուխդ նաւա-
քէ և աշխատէ ընելիք գործերդ կանանաւոր ընել:
Թէյը բերիր, ո՞ւր է շաբարը:

ԹՐՍ. (Ափսէն աչէկ անցընելով). Մոոցեր եմ տէր
իմ:

ՄԿՐ. Եւ այդ հաւու չափ ուղեղուդ, մէյ մըն ալ
կարգուելու ելեր ես:

ԹՐՍ. Այո էֆէնտիս: Հաւատացէք որ եթէ ա-
մուսնանամ, այդ հաւու չափ ուղեղս կոլի ուղեղ
պիտի դառնայ:

ԱՆՀՅ. (Ճպիտով մը). Ես ձեռքովս պիտի ա-
մուսնացնեմ թորոսը: Ա՞ն ինծի ամուսնացուց, ես ալ
իրեն Պարտիզակցի աղուսոր աղջիկ մը պիտի զանամ:

ԹՐՍ. Ողջ ըլլաք ափիկն. Աստուած սիրտերը
նուդ մուրասոր տայ:

ՄԿՐ. Գլուխը հաստ է Անոնիս : Այսքան ատեն քովս ծառայեց, մարդ չ'եղաւ, ասկէ հօտքը մարդ պիտի ըլլայ : Էմէքտուր է ըսելով, կարգուելէդ յետոյ բռնեցինք քեզի փոխանձեցինք, (ծեռքը սեղանին զարնելով), բայց նո՞ւ գտվա :

ԱՆՀՅ. Թորոսը բարի է և պարտաճանաչ : Այսքանն ալ բոււական է : Եթէ պղտիկ թերութիւններ ալ ունի, հոգ չ'օր մը կ'ուղղուի :

ԹԲՄ. Եթէ անգում մը կարգուիմ, այն ատեն պիտի տեսնէք թէ ի՞նչ անզուգական մէկը պիտի ըլլամ :

ՄԿՐ. Պարտպ խօսք : Դուն ասկէց ետքը ալ չես ուղղուիր : Ամէն օր տասն անդամ շուկայ կ'երթաս, տասը տեսակ բան բերելու համար : Մարդ Աստուծոյ, օր մըն ալ խելացի գտնուէիր տէ՛ ամէնը մէկէն բերէիր : Եթէ առաւօտուն պազար երթաս, միսը առնելէդ յետոյ, պէտք է մտածիս որ, այդ միսին հետ բանջարեցն մըն ալ կ'ուղիւ : Յետոյ սալաթացուի մըն ալ պէտքը կայ, լոլիկ կ'ուղիւ, լիմոն կ'ուղիւ, հաւկիթ կ'ուղիւ, հաց կ'ուղիւ եւլու, եւլու :

ԹԲՄ. Վատան եղիք տէր իմ, այսուհետեւ ձեր ուղածին պէս պիտի ընեմ : Ներողութիւն, երթամ շաքարը բերեմ : (Վելլի):

ԱՆՀՅ. Շիտոկը հայր, Թորոսը չափազանց կը սիրեմ : Ոչ թէ երկար տարիներ իր խնամքը և գուրգուրանքը վայելած ըլլալուս՝ այլ իր հաւատարմութեանը համար : Ասանկ մարդ կայ հիմա :

ՄԿՐ. Հաւատարմութիւնը անուբանալի է, բայց ապուշութիւնն ալ անհերքելի :

ԱՆՀՅ. Մարգս կատարեալ չի կրնար ըլլալ : Ճըշմարտութիւնը սաէ թէ Թորոսին բարի յատկութիւնները շատ աւելի ծանր կը կշռն, քանի ապուշու

Թիւննէրը : Ո՞վ զիտէ, կարելի է, իսկապէս վաղը երբ ամուսնանայ, խելքը գլուխը կուզոյ :

ՄԿՐ. Սպասենք և յուսանք :

ԹԲՄ. (Ամենելով) : Ահա չաքարը : (Ափսէին մէջ կը դնէ): Եթէ ինծի պէտք ունենաք, վա՛րը խոհանոցն եմ : (Վելլի):

ՄԿՐ. Հա՛, աղէկ միտքս եկաւ, ինչո՞ւ Վարդօն այս առաւօտ քեզի հետ այդպէս բարձրածայն և քիչ մըն ալ բարկութեամբ կը խօսէր :

ԱՆՀՅ. Քեզի համար հայր : Երբ երէկ թեթեւ քրիզ մը ունեցար, չափազանց նեղացաւ թէ ինչո՞ւ անմիջապէս բժիշկը չեմ բերած :

ՄԿՐ. Սյովան նեղանալու ի՞նչ պէտք ունէր : Թեթեւ բան մըն էր, ոնցաւ զնաց :

ԱՆՀՅ. Ախ հայրիկ, եթէ զիտաս թէ Վարդօն ի՞նչ բարի սիրած ունի և քեզի ալ որքան կը սիրէ :

ՄԿՐ. Գիտեմ ազջիկս գիտեմ : Արդէն այս քանի մը ամսութան ընթացքին, փորձերով շատ բան տեսայ : Ազնիւ տղայ : Հիմա կը զգում թէ՝ որքան սխալեր եմ «Ես ձկնորսի ազու ազջիկ չեմ տար» ըսելուս :

ԱՆՀՅ. Այսօր կարուհին պիտի երթայի, երէկուան բարկութիւնը հանգարանցնելու համար, մինչեւ պանքա իրեն ընկերացայ և քանի մը անուշ խօսքերով սիրտը տաի :

ՄԿՐ. Աշխատէ որ երբէք չի վշտացնես զինքը : Աս աղան ազնուութեան և բարութեան մարմնացումն է :

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ ՍԵՐՈԲ

ՄՐԲ. (Արտեղած մսնելով): Բարեւ ձեզ :

ԱՆՀՅ. Բարեւ հօրեղբայր :

ՄԿՐ. (Անհամբեր) Ի՞նչ լուր Սերոբ։ Ի՞նչ եղաւ դործը։

ՄՐԲ. Ի՞նչ պիտի ըլլայ։ Նախնական դատարանին վճիռը հաստատուեցաւ և հրահանգ տրուեցաւ առ որ անկ է, քառասուն և ութը ժամուան մէջ, գրաւի տակ գտնուած տունը վաճառուելու համար։

ՄԿՐ. (Դող ելած)։ Ի՞նչ կ'ըսես Սերոբ … իրա՞ւ։ ԱՌ սարսափելի բան։

ՄՐԲ. Բայց Մակար, այդքան յուզուելու ի՞նչ պէտք ունիս։ Դուն արդէն նախապէս իննուառուն առ հարիւր համոզուած էիր թէ գտար պիտի կորսնցնես։

ՄԿՐ. Վերջին յոյս էր, ան ալ լմացաւ։

ԱՆՀՏ. Հայր, քու առողջութիւնդ և կեանքդ աւելի թանկարժէք է քան այդ տունը։ Թող ծախեն, քանի որ արդարութիւնը այդպէս վճռեր է։

ՄԿՐ. (Շուարած, ինքնիրենը խօսելու պես)։ Ո՞ր քարին զարնեմ գլուխս, ո՞րո՞ւ դիմեմ, ո՞րմէ՞ դրամ ձարեմ։ Փացայ, լմացայ։

ԱՆՀՏ. Հայր, կ'աղաչեմ, մի մոռնար ըստծնելս։

ՄՐԲ. Մակար, անս եղբայրդ հոս լեռան պէս կեցած է։ Ուսեցած հարստութեանս մինչեւ վերջին սանթիմը քուկդ է։

ՄԿՐ. (Ելքօր խօսերեն ազդուած եւ յուզուած)։

Շնորհակալ եմ։ (Թերեւ նուալում մը կ'ունենայ)։

ԱՆՀՏ. (Դող ելած հօր քովը վազելով) Հայր ի՞նչ եղար, ի՞նչ ունիս։

ՄՐԲ. (Ելքօր բազկերակը շփելով)։ Մակա՛ր, ի՞նքինքիդ եկուր։

ԱՆՀՏ. (անմիջապէս մեջեղի դուռը վազելով)։ Թորո՛ս, Թորո՛ս։ (Քոլոնեալին շիշը կ'առնէ եւ հօր ձեռքերը, կուրծքը եւ հակար կը շփի)։

ԹՈՐՍ. (ՄՏնելով)։ Ինձի՞ կանչեցիք, տիկին։

ԱՆՀՏ. Շուտ գնա բժիշկը կանչէ։

ԹՐՄ. Շատ լու տիկին։ (Հետաքրիր նայուած մը կը նետ Մակարին)։

ԱՆՀՏ. Մի տնանար։ Զե՞ս տեսներ, հայրիկը անհանգիստ է։ (Թորոս կ'ելլէ)։

ՄՐԲ. Անոնիտ, քիչ մը օ տը քոլոներ եւս սրսկէ երեսին։ (Անահիտ կրկին օ ըլ քօներ կը սրսկէ։ Մակար կամաց կամաց ինքնինքն կուզա)։ Տե՛ս, աչքերը բանալ սկսու։

ԱՆՀՏ. Հայր, բաց աչքդ … նայէ մենք հոս ենք։

ՄԿՐ. Պո՞ւն ես Անահիտ։ Սերոբը ո՞ւր է։

ՄՐԲ. Հո՞ս եմ, եղբայր։ Բա՞ն մը կ'ուզես։

ՄԿՐ. Վարդօն ո՞ւր է։

ԱՆՀՏ. Հիմա՞յ կուզայ, ատենն է։

ՄԿՐ. (ինքնինքն հաւաքելով)։ Զարմանալի բան, ինձի ի՞նչ պատահեցաւ։ (Զենքերը շարժել կ'ուզէ)։ Ուժ չ մասցեր, ցնցուիի կտորներ են կարծես։

ԱՆՀՏ. Բան մը չէ հայր, շուտով կ'անցնի։ Արդէն հիմայ բժիշկը պիտի գայ։

ՄԿՐ. Բժիշկի ի՞նչ պէտք կար, անս անցաւ։ (Անահիտին եւ Սերոբին ձեռքերը բռնելով)։ Դուն Անահիտ, բարի զուակի։ Խոկ դուն Սերոբ, պատուական եղբայր։ Գիտեմ թէ դուք երկուքդ ալ խոստումնիդ պիտի յարգէք և չափաի թողուք որ ես այս յառաջացած տարիքիս մէջ ուրիշներուն կարօտ մնամ։

ՄՐԲ. Ատիկա մեր պարտականութիւնն է։

ՄԿՐ. Ցաւերս մի բաժնէք, թողէք որ ես իմ հոգերովս առանձին տառապիմ։ Բայց պատիւս բարձր բռնեցէք, որովհետեւ անիկա ձերինն ալ է։

ԱՆՀՏ. Հայր, մի խօսիր այլեւս, մի յոդնեցներ ինքնինքդ։ Սանկ մէյ մը երեսս նայէ։ Խնդայ քիչ մը տեսնեմ։ (Մակար կը ժպտի, Անահիտ ուրախութեամբ

վիզը փարբուելով): Այս', միշտ այսպէս, իմ անուշիկ հայրիկս:

ՄՐՅ. Կուղե՞ս, քեզի քիչ մը ջուր տա՞մ Մակար:

ՄԿՐ. Պաղ լիմօնատ մը տւելի լու է կարծեմ:

ԱՆՀՏ. Ահմիջապէս հայր իմ: (Մէջեղին կ'ելլէ):

ՄՐՅ. Եթէ կ'ուղես, անկողին մտիր և հանգիստ ըրէ:

ՄԿՐ. Ալ պառկելէն ձանձրացայ. քիչ մըն ալ հոս կը մնամ: (Ձեսաքիքութեամբ). Երբ դասարանը վճիռը տուաւ, հակառակորդ փաստարանը ի՞նչ ըրաւ:

ՄՐՅ. Կողաչեմ եղբայր, նորէն մի անդրադասնար այդ խնդրայն: Վաղը միւս օր հարկաւ ատեն կ'ունենանք տեսնուելու:

ՄՐՅ. Ես վստան եմ որ լուրը կայծակի արագութեամբ քաղաքին մէջ տարածուած է: Ո՞վ գիտէ որ քա՞ն ուրատիսցողներ եղան:

ՄՐՅ. Զգենք հիմա դասական խնդիրը և քեզմով դրագինք: Կ'ուղե՞ս տուն վերոդասնալ:

ՄԿՐ. Երէկ վարզօին ըսի այդ խնդիր, բացարձակապէս հակառակեցաւ: Խենթեցա՞ր, հիւանդ մարդ տունը տառնձին ի՞նչ պիտի ընես ըստաւ: Աւելի շիտակը կ'ուղե՞ս, անիկա քեզի ալ հոս բերել կ'ուղէ կոր:

ՄՐՅ. Այս', կը հաւատամ ըստածիդ: Վարդօն շատ անձնուէր և անկեղծ աղայ է և մեզի ալ չափազանց կը սիրէ:

ԱՆՀՏ. (լիմօնատը բերելով). Առ հայրիկ, բայց ամէնը մէկ անզամէն մի խմեր, որովհետեւ շատ պաղ է:

ՄՐՅ. Տուր տեսնեմ: (Գաւարը կ'առնե եւ քիչ մը խմելով). Օ՛խ, հիսնալի է: Շատ ապրիս աղջիկս:

ԱՆՀՏ. Կեցիր որ կոնսկիդ բարձ մը բերեմ, աւելի հանգիստ կ'ընես: (Աջ կողմի սենեակը կը մտնի):

ՄՐՅ. Մակա'ր, դուն քանի մը օրուան համար օդափոխութեան պէտք ունիս: Եթէ տեղ մը երթաս, ես ալ հետդ կուգամ:

ՄԿՐ. Գէշ չ'ըլլար, Այդ մասին կը մտածենք: (Անահիտ բարձը կը բերէ):

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՑՆՔ ԵՒ Բ Փ Ի Ծ Կ

ԲԺԿ. (մտնելով). Բարեւ ձեզ:

ԱՆՀՏ. Օ՛ բարեւ տօքթէօր:

ԲԺԿ. Ի՞նչ կայ... նորէն ի՞նչ ունիք:

ԱՆՀՏ. Հայրիկը քիչ մը անհանգիստ է: Զեմ գիտեր, քիչ առաջ վրան մարելիքի պէս բան մը եկաւ:

ԲԺԿ. (որ արդեն հիւանդին մօտեցած էր, բազիերակը բննելով). Ուրիշ ատեն ասանկ բան մը պատահած էր.

ՄԿՐ. Այս' տօքթէօռ, երկու ամսուան ընթացքին ասիկա երրորդ անգամն է:

ԲԺԿ. (լեզուն կը նայի եւ բննական կարգ մը ձեւակերպութիւններ յետոյ) Բան մը չէ, կ'անցնի: Ինչպէս կը տեսնեմ, բաւական ջղայնոտ վիճակ մը ունիք: Այս օրերս ո ե յուղում կամ բարկութիւն ունեցա՞ք:

ՄԿՐ. Այս':

ԲԺԾԿ. Պէտք է գիտնաք որ յուղումը շատ մը չարեաց աղբիւրն է: Հիւանդութիւնները առնասարակ յուղումէ յառաջ կուգան: Հիմա ձեզի դեղ մը պիտի տամ, որմէ երկու ժամը անդամ մը, ապուրի մը գգաւ պիտի խմէք: Ինչպէս ըսի, բան մը չէ, շուտով կ'անցնի, բայց հանգիստ անհրաժեշտ է: (Դեղագիրը գրելու կ'զբաղի):

ԱՆՀՏ. իմացա՞ր բժիշկին ըստածը հայր: Հանգիստի պէտք ունիս եղեր:

ԱՐԲ. Խմանսալը իմացաւ. Խնդիրը գործադրելուն
մէջն է:

ԱՆՀՅ. Եթէ կ'ուզէ որ բժշկուի, բանի մը վրայ
պէտք չէ մտածել:

ԲԺՇԿ. Ահա գեղազիրը: Խնչպէս ըսի, սիսօ մըն
է, որմէ երկու ժամը անգամ մը, ապաւրի դգալ մը
պիտի խմէք: (Անահիտին) Երկու օր յիսոյ իր վիճակը
ինձի կը տեղեկացնէք: Չեմ կարծեր որ երկրորդ այցե-
լութեան մը պէտքը ունենամ:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ — ԴԵՂԱԳԱՌՈՒՄ յետոյ ՔԱՀԱՆԱՅ — ԺԱՄԿՈԶ

ՄՃԴ. (մՏԱԵԼՈՎ). Բարեւ տիկին, բարեւ պարոն-
ներ: Օ՛, գո՞ւք ալ հոս էք տօքթէօր:

ԲԺՇԿ. Այս՛, պարոն Մակարին համար կանչուած
էի: Քիչ մը անհանգիստ է եղեր: Քննեցի: Բարեւախ-
տաբո՞ր լուրջ բան մը չի:

ԴՂԻ. Ի՞՞նչ, պարոն Մակարը հիւա՞նդ է:

ՄԿՐ. Այս՛, քիչ մը անհանգիստ էի: (Խիս քա-
ղաքալարօնին). Պարոն Մուշեղ, ի՞նչ բանի կը պար-
տինք ձեր այս անուկնկալ այցելութիւնը:

ԴՂԻ. Ճի՞շդ ես ալ կ'ուզէի ի գիտնալ թէ ի՞նչ բանի
կը պարտիմ ձեր այս անուկնկալ հրաւերը: Քիչ առաջ
թորոսը լեզուն գուրս ինկած գեղարան եկաւ և «կ'ա-
զաջեմ պարոն Մուշեղ, շուտ տուն գացէք», ձեր ներ-
կայութիւնը անհրաժեշտ է» ըստու: Բնականաբար ձեր
կողմէն եկած ասանկ հրահանգի մը անտարբեր չէի
կրնար մնալ: (Ամենին ալ ապօած իրարու կը նային):
Դործս ձգեցի և անմիջապէս փութացի գալ:

ԱՆՀՅ. (քաղաքալարօնին). Չեր ներկայութիւնը
մեծ պատիւ՝ ու միանգամայն հաճոյք է մեզի համար

պարսն գեղազիրծ, Բայց կը մտածեմ թէ՝ ո՞վ կրնայ
տուած ըլլալ թորոսին, ձեզի ստիպողաբար հոս հրաւե-
րելու հրահանգը:

ԴՂԻ. Խնչպէս: Դուք բանէ մը տեղեկութիւն
չունի՞ք:

ՄԿՐ. (Անահիտին). Ապուշ է աղջիկս ապուշ: Անոր
ըրած գործերուն խելք չի հասնիր:

ԱՐԲ. Եյ հիմա Թորոսը ո՞ւր է:

ԴՂԻ. Այս պատուէրը տալէ յետոյ, կայծակի ա-
րագութեամբ խանութիւն հեռացաւ գնաց:

ԱՆՀՅ. Ներզութիւն պարոն Մուշեղ, կարծեմ
թիւրիմացութիւն մը կայ: Բայց քանի որ հոս էք,
բարի եղէք սա գեղազիրը պատարաստել և ծառային
հետ անմիջապէս դրկել:

ԴՂԻ. (դեղագիրը առնելով). Սիրով տիկին:

ԲԺՇԿ. Մեկանզ իշնանք պարոն Մուշեղ: Ուրիշ
հիւանդներ ալ ունիմ, ինձի կ'ապասեն:

ԴՂԻ. Երթանք տօքթէօր: (Բժիշկին նետ երբալու
պատաստած, քահանան ժամկոչին ընկերակցութեամբ
կը մՏնէ):

ՔՀՆ. Ողջոյն ձեզ:

ԱՆՀՅ. (ձեռքը համբուրելով). Օրհնեցէք տէր հայր: (Ամենին ալ զարմանելով իրարու կը նային):

ԱՐԲ. Բարի եկաք տէր հայր: (Բժիշկ եւ դեղա-
գործ կը խօսակցին):

ՔՀՆ. Բարի տեսանք զաւակներս: Ուրախ եմ որ
տաէնք ալ ողջ առողջ էք: Ասատուծոյ օրհնութիւնը
և նոյ Նոհապետին պէրէքէթը ձեր տունէն անպակաս
ըլլայ: Հիմտ անշուշտ կը մտածէք և կամ նոյն իսկ
կ'այլպնէք որ քահանաները սովորաբար Զատկի,
Ծնունդի, հարսանիքի, կնունքի, մեռելի, կիրամուտ-
քի, կամ այսօրուան պէս հիւանդի մը Սրբութիւն տա-
քի:

լու պարագային մէջտեղ կ'ելլեն։ Այս', իրաւունք ունիք այդպէս մտածելու։ Մէնք, քահանաներս, թէեւ կը փափաքինք գոնէ շաբաթը անդամ մը տեսնել մեր պատուական ծուխերը, բայց գյալզդարար անանկ ապերախտ ասպարէզի մը մ'ջ կը գտնուինք, որ ոչ մեր անձին տէրն ենք և ոչ ալ մեր կամքին։

ԱՆՀՏ. (որ խմանալի խօսերուն ուժադրութեամբ հետեւած եր). Մէկու մը հազորդութիւն տալու եկած էք Տէր հայր։

Քէն. Այս', ձեր սիրեցեալ և յարգելի հօր։

ԱՆՀՏ. Հայրիկի՞ն . . .

Քէն. Այս': Բայց հոս զորմանալու ի՞նչ կայ։ Դուք չէիք լուր զրկողը թէ Մակար էֆէնտին որպէս ջերմեռանդ քրիստոնեայ, հազորդուիլ կ'ուզէ։

ԱՆՀՏ. Մէ՞նք։ Տարօրինո՞վ բան։ Այս, ստոյդ է թէ հայրս քիչ մը անհանգիստ է, բայց բարեբազզարար ոչ մահամերձ։

ՄԿՐ. Աս ի՞նչ թօհափ քօմէտի է։ Ի՞նչ կ'ըլլանք կոր։

Քէն. Քիչ առաջ հապճէպով թորոսը եկեղեցի եկաւ և խնդրեց որ անմիջապէս ժամկոչը միտսին առնելով հոս գամ, առարկելով թէ Մակար էֆէնտին ծանր հիւանդ է և հազորդուելու պէտք ունի։

ԱՐԲ. Տէր ողորմիա՞։ Տէր ողորմիա՞։

ԱՆՀՏ. Թորոսը այսօր խենթեցած ըլլալու է։

ԴԴԳ. Իջնանք աօքթէօր, գեղը չ'ուշանայ։

ԲԺԿ. Կեցիր տեսնենք սա քօմէտիին վերջը ո՞ւր պիտի երթայ։

ԴԴԳ. Բայց հիւանդնե՞րը։

ԲԺԿ. Ի՞նչի՞ո հիւանդը . . . երթալիք տեղ մըն ալ չունիմ։ Բժիշկներուն սովորութիւնն է յաճախորդնե-

րուն այդպէս ըսել։ (Յած ձայնով խօսակցութիւննին կը տարունակին)։

Քէն. Ուրեմն թիւրիմացութիւն մը կայգործին մէջ։

Մկր. Եայէ իսրաւուակը կուգա՞յ։ Այս անգամ բլուխը պիտի ջախչախէմ։

ԱՆՀՏ. Այս Տէր Հայր, սխալ լուր մը տուեր են ձեզի։

Քէն. Հոգ չէ։ Գոնէ այս առիթով բարեբազզութիւնը ունեցաց Մակար էֆէնտին և ձեզի անգամ մը եւս տեսնելու։ Կը մազթեմ որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, հայրիկին կատարեալ առողջութիւն և ձեզի ալ երկար ու երջանիկ կեսնք պարզեւէ։

ԱՐԲ. Վարդօն ո՞ւր մնաց, Անահիտ, կարծիս թէ ուշացաւ։

Քէն. (ոսքի ելլելով). Այժմ մեր պարտականութիւնը կատարած ըլլալու համար, պահպանիչ մը կարգանք և մեկնինք։

ԺՄԿԶ. (մեկուսի). Յոդնութիւննիս պարապը գընաց։ Եթէ մեռած ըլլար, գոնէ քանի մը զուրուշ կ'առնէինք։

ՏԵՍԻԼ Զ.

Ն Ո Յ Ն Ք — Վ Ա Ր Դ Յ (յետոյ) Թ Ո Ւ Ո Ս

ՎՐԴ. (մտնելով). Բարի՛ւ ձեզ։ (Բազմութիւնը նըմարելով յանկարակիի եկած)։

ԱՆՀՏ. (Վարդօն մօտենալով). Ինչո՞ւ ուշացար, վարդօ՛։

ՎՐԴ. Ի՞նչ է այս բազմութիւնը, Անահիտ, Բա՞ն մը պատահեցաւ։

ԱՆՀՏ. Դոդ մոհլար, Բան չիկայ։ Բարեկամներ, որոնք պարզապէս այցելութեանն եկած են։

ՎՐԴ. Բարի եկաք Տէր Հայր... Տօքթէօ՛ր...

ՏԻՄՈՒՅՆ. (Չեռքենին կը սեղմէ):

ՄԿՐ. Անահիտ, ժամ առաջ ըսէ ըսելիքդ որ խեղճ տղան չի մատհողուի:

ՎՐԴ. Բաէ տեսնեմ Անահիտ, ի՞նչ պատահեցաւ:

ԱՆՀԾ. Լուրջ բան մը չէ եղածը: Պարզապէս թուրուին ապուշ մէկ արարքը:

ԺՄԿԶ. (Անկուսի). Ժամկոչներուն երեսը պաղ կ'ըլլայ: Մարդը մեզի բարեւ անգամ չի տուաւ:

ԹՐՄ. (անապարանօֆ եւ յօգնած մտնելով). Ամէնքն ալ եկա՞ն:

ՄԿՐ. (քարկութեամբ). Մօ ապո՛ւշ, աս ի՞նչ խայտառակութիւն է:

ԹՐՄ. (անսարբեր) Ի՞նչ կայ: Ախալ բան մը ըրինք է փէնտիս:

ՄԿՐ. Դեռ կր յանդգնի՞ս պատասխանել: Քեզի ո՞վ ըստւ որ երթառ և թաղը ամբողջութեամբ իրար անցընես:

ԹԺԾԿ. Մի յուզուիք Մակար է փէնտիս: Յուզումը չափազանց լիսասկար է հիւանդին:

ՎՐԴ. Հանդարտէ սիրելի հայր: Ես կը խօսիմ թորոսին հետ: Պատմէ տեսնեմ թորոս, ի՞նչ է պատահածը:

ԹՐՄ. Ոչի՞նչ է փէնտիս: Զեմ գիտեր թէ աս տուշին մէջ մարդ ի՞նչպէս շարժելու է: Այս՝ կը խօսատովանիմ թէ, կարգ մը սիստներ ունիմ, բայց զոնէ այսօրուան ըրածս կատարեալ մարդու մը զործ էր:

ՎՐԴ. Բաէ տեսնեմ, ի՞նչ ըրիր:

ԹՐՄ. Էփէնտին հիւանդացաւ: Հրամայեցին որ բժիշկը կանչէմ: Գացի, բժիշկին լուր տուի, անկէ ալ ելայ գեղագործին գացի, ժամանելով թէ բժշկական քննութենէն յետոյ, գեղի ալ պէտք պիտի ունենան:

Պաշտօնս լիուլի կերպով կտառարտծ ըլլալու համար, գեղագործին բաժնուեցայ, քահանային դիմեցի, անշուշտ միշտ ենթագրելով որ գեղերը կրնան անօգուտ մնալ, հիւանդին վիճակը ծանրանայ և Սուրբ Հաղորդութեան պէտքը զգացուի: Ժամկոչն ալ բերի, պէտք կ'ըլլայ ըսելով, և նոյն իսկ գագաղն ալ ապապրեցի, բայց մարդուկը երկու ժամէն հազիւ պիտի կարենայ տալ: (Ամենին ալ բարձրանայն կը խնդայ) Հոս խընդալու ի՞նչ կայ: Պարտաճանաչութիւնը այդքան ծիծակութիւն է:

ՄԿՐ. Ապուշ, քեզի ո՞վ ըստաւ որ այս մարդիկը առնես և հոս բերես: Քանէ միայն բժիշկ մը պահանջուեցաւ:

ԹՐՄ. Եւ ես աւելի մանրամասնութեան մտայ և հետեւանքին վրայ ալ մատահցի: Ներովզութիւն է փէնտիս, զուք չէ ի՞ք այս առաւօտ ինձի ըսողը թէ երբ միաբ բերուի, բանջարեցէն ալ, լուիկն ալ, պառուցն ալ, լեմօնն ալ, հաւկիթն ալ, սալաթացուն ալ պէտք է մեկտեղ բերուի: (Ամենին ալ նորէն կը խնդայ) Էյ, հիմա պիտի խննթենամ: Յժիշկէ չուզեցի՞ք... ահա՛ բժիշկն ալ, գեղագործն ալ, քահանան ալ, ժամկոչն ալ, նոյն իսկ գագաղն ալ: Ուրիշ պակաս բան մնա՞ց որ կը խնդաք:

ՄԿՐ. Ասէ՛ տիմար լու՛, մի խօսիր այլեւս, որպէսզի վրայ չի խնդան:

ՎՐԴ. Սիրելի հայր, մեզի համար ամենէն կենաց կանը ձեր առնդջութիւնն է: Բանի որ այժմ ինքզինքնի լու կը զգաք, թուրաը սասաւելու կամ պատմելու պարագան ինձի ձգեցէք: Ես զիտեմ ընելիքս: Իսկ գուք սիրելի Տէր հայր, ինչպէս և դուք պարոններ: Ներովզամիտ եղէք այս պիտիկ միջազգէպին՝ որ ուղղակի

Թորոսին ծայրայեղ պարտաճանաչութենէն ծնունդ
տռած է :

ՔՀՆ . Կ'ազաշեմ պարօն Վարդօ :

ԲԺՇԿ . Ոչի՞նչ , ոչի՞նչ :

ՎՐԴ . Քանի որ հանելուկը լուծուեցաւ , ևս պիտի
խնդրեմ ներկաներէն որ բարի ըլլան այս ցերեկուոն
ճաշը մեզի հետ ընել : Այսպէսով , թէ՛ թողութիւնը
կատարեալ կ'ըլլայ և թէ առիթը կ'աւնենանք հայրե-
կին առաջնութեան համար մէյ մէկ գաւաթ գինի պար-
պելու :

ԺՄԿ . (մեկուսի) Եթէ փորերնիս կշտացնենք , ան
ալ բան մըն է :

ՎՐԴ . Համաձայն էք , այնպէս չէ :

ՔՀՆ . Ես իմ կարգիս , հաճոյքով կ'ընդունիմ ա-
ռաջարկը :

ԲԺՇԿ . Ես ալ նմանուպէս :

ԴՂԳ . Իսկ ես՝ ամենայն սիրով :


ՎՐԴ . Ուրեմն Անահիտ , չուտ վար իջիր և պէտք
եղածը պատրաստէ , մեզի եղած այս բացառիկ պատիւը
արժեցնելու համար : Գոլով քեզի , (Ոռոսին կը մօսե-
նայ եւ կես կատակով մը ականջը բաւելով) քու պա-
տիժդ ես պիտի տնօրինեմ , խելքդ գլուխդ բերելու
համար :

ԹՐՍ . Զեզիպէ ներուն հոգիս խուռապան : Եթէ
մեռնիլ պէտք է , պատրաստ եմ :

ՎՐԴ . Մեռնելու համար զեռ շատ կանուխ է : Քեզի
պիտի ամուսնացնեմ . ահա՝ պատիժդ :

ԹՐՍ . Եւ կը այն ատեն Սոլոմոն իմաստուն մը
պիտի գտառնամ :

ՎԱՐԱԳՈՅՐ



TELEFUNKEN (1938)

Թատիօներու միակ ներկայացուցիչը

ԱԶԻԶ ՊՈՒԼՈՍ

AZIZ BOULOS

Գանիրէ , 73 Խպրանիմ Փաւա փողոց

Հեռակայն 56114 - 56115

ՄԱՍՆԱՃԻՒՂ

3 Մադրապի փողոց - Հեռակայն 56116

Ա.Պ.Ե.Ք.ՍԱՆ.ԴՐԻՍ.

18 Ֆոււաս Ա. փողոց - Հեռակայն 22305

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՄԵԾ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

ՍԱՔԱՅԱՆ-ՓՐՈՒՆՃԵԱՆ

THE CAIRO BRASS FOUNDRY

SAKAYAN & FROUNDJIAN

Մահմառ - Պամրա

Հեռածայն 41279

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԶՈՒԼԱՐԱՆ

Առողջապահական եւ զեղարուեստական

ԾՈՐԱԿՆԵՐՈՒ

ՄԻԱԿ ՀԱՅԹԱՅԹԻՉԸ

Պղինձէ, երկաքէ, ալլիմինիւմէ եւ զանազան
մետաղներէ ձուլուած հաշակաւոր գործեր:

ԱՆՈՆՔ ՈՐ ԱՅՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԳՈՐԾ Կ'ՈՒՆԵՆԱՆ

ԶԱՓԱԶԱՆՑ ԳՈՅ ԿԸ ՄՆԱՆ

ALEX. G. AVIERINO
ԱՎԻԵՐԻՆՕ

Գաճիրէ

8 Էլ-Կինէնա փողոց

Ադեմանդիա

27 Սաաս Զաղլուլ փողոց



ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ
ՀԱՄԱՐ

ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

ԿՈՇԻԿՆԵՐ

ԳՈՒԼՊԱՆԵՐ

ՇԱՊԻԿՆԵՐ

ՓՈՂԿԱՊՆԵՐ

ԲՈՒՐԴԵՒ ԲԱՄՊԱԿԵ
ԱՆԿՈՂԻՆԻ

ՄԱԾԿՈՑՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ

ՀԱՇԱԿԱԿՈՐ

ՏՈԿՈՒՆ

ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐ

ԶԵՐ ԼՈՒՍԱԿԱՐ ՇԱԿԱՆ

ԲՈՂՈՐ ՊԵՏՔԵՐՈՒԽ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑՑՔ

L. ՅԱԺԴԵԱՆ-Ի

Գալիք, Ֆուատ Ա. Փողոց թիւ 18

Հեռանան 59161

ԽԻԱՏ ԿԱՐԵՒՈՐ

Վ. Թ. ՊԱՐԾԱՆՔԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒԾ

175, ԷՄԱՏ ԷԼ ՏԻՆ ՓՈՂՈՑ

(Մօսաքի կից)

Պատիւն ունի ծանուցանելու իր յարգելի յահախորդներուն թէ, սացած է ձմեռնային եղանակի զանազան նորոյթներու նոյն մըրեր մը, որոնք են բրդեղէն, մետախեղէն, բամպակեղէն, շապիկցու եւ բիժամացու ամենաընթիր կերպասներ, հազուսի զազմիրներ, անկողինի բուրդէ եւ բամպակէ ծածկոցներ, գուլպաներ, փողկապներ, եւային եւային, եւ որոնց զեներն անմրցելիօրէն աճան ըլլալով Զեր իսկ շահը կը պահանջէ այցելել անզամ մը, Զեր զմումները ընելէ առաջ:

ՓՈՐՁԵՑՔ

ԳՈՆ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԱՐԵՔԵԼՔԻ ՄԻԱԿ ԱՐԴԻԱԿՈՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ՆԱՍԻՊ-ԹՈՐԳՈՄ

187 Էման-Էլ-Տիբ Փողոց

Հեռ. անայն 43361



ՄԱՍՆԱԳԵՏՔ

Լուսաւոր նշանատախտակներու

Մետաղայ կարասիներու

Արդիական լուսաւորութեանց

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Բիռա լուսասփիւներու

Տունական ալիքմինիօմի

Եւ Isorel նարտարուեսական տախտակներու:

= 33 =

Գ. ԱՐԱՐ

Տեսարանը կը ներկայացնէ Վարդոի տան մեջ հիւրասահ մը: Ազ ու ձախ դուռներ: Ճոխ կանկարասի: Խորը խուռ Ֆօնօկրաֆ մը:

ՏԵՍԻԼ Ա.

ԹՈՐՈՍ առածին, յետոյ ՄԱԿԱՐ

ԹՐՍ. (գիրկը պեղեք մը, թիկնարոնի մը վրայ նասած) Վայ չարաձճի, կը խնդաս կոր է՛: Դուն ալ սկսար մեծ հօրդ պէս զիս ծաղըրի: Աղւորիկ մանչուկի, նոնոշիկ մանչուկ, անուռակ մանչուկ: (Պիպեկը կ'սկսի լալ). Է՛ս, իշխէ առ չեղաւ. Մի լոր պէպէքս, մեղք ես, զերջը կը սիհարնոս: (Սեղանին վրայ գտնուող պիպենօնը բերանը դնելով) Ա՛ռ, ա՛ռ և լոէ: Այս առաւօս տէրս և տիրուհիս եկեղեցի գացին, աս անթիքան ալ ինծի ձգեցին: Եթէ լալկան կամ ձզոնձ պէպէք մը ըլլար, շատոնց պատուհանչն վար նետած էի: Աս պէպէքը խելացի է, թանթոշիկ է, անուշիկ է: (Կը համբուրէ): Ականջիս ձայն մը եկու... կարծեմ թորոս պուտցին: Արդիօք նշանա՞ծս է: (Ոտի կ'նլլէ եւ աջ կողմի պատուհանին մօտենալով) Այս', ինքն է, իմ մէկ հատիկ հրեշտակս: (Զերենովը «ինչպիս եսի նեան կ'ընի»): Ե՞ս... տղէկ եմ... այսօ՞ր... այսօր չեմ կրնար տունէն բաժնութիլ: Մեծ էֆէնտիին ծննդեան վաթսուներորդ տարեգարձն է... այո՛... ցերեկին ճոխ սեղան մը պիտի ունենանք... Հի՞ւր... չե՞մ կարծեր... ձեռքի՞նս... պէպէքն է... տառօսը քեզի... ինչո՞ւ... պէպէք ունենալ չե՞ս ուզեր: (Մակար ձոխ կողմէն կ'երեայ եւ Թորոսը մտիկ կ'ընէտ:

ՄԿՐ. (Մեկուսի) Որո՞ւ հետ կը խօսի:

ԹՐՍ. Հա հոգիս հա... սեւուլիկ աչուկներդ սիրեմ:

ՄԿՐ. (մեկուսի) Թշուառականը երկու չորսաթ է
որ նշանուեցաւ, գործը բաւական եփեր է արդէն:

ԹՐԱ. (միշտ պատուհաննեն) Եթէ մանչ ըլլայ, հօրս
անունը, Արխողում պիտի դնեմ, իսկ եթէ աղջիկ,
մօրս անունը, Անթառամ:

ՄԿՐ. (մեկուսի) Տարի մը նշանած մնալէ յետոյ,
պիտի ամուսնանայ, զաւակ պիտի ունենալ, անունն
ալ կամ Արխողում կամ Անթառամ պիտի դնէ:

ԹՐԱ. Ան քու խնձորի պէս այտերդ խածնելով,
պիտի հատցունեմ և սեւուլիկ աչքերդ ալ փարելով,
տեղը չամիչ պիտի դնեմ:

ՄԿՐ. Խե՞ղճ աղջիկ, բաւական քաշելիք ունիս:

ԹՐԱ. Հիմա՞յ... չե՞մ կրնար գալ: Ծերուկը հոս
է, ես ալ գրազած եմ: (Չեռովով նշան կ'ընէ) Ատիյո...
կէս օրէն յետոյ կրկին կը ահսնուեինք: (Դառնալով
Մակարը կը տեսնէ) Վա՛յ, էֆէնախն հոս է եղեր:

ՄԿՐ: Որո՞ւ հետ կը խօսէիր Թորոս:

ԹՐԱ. Ո՞չ ոքի:

ՄԿՐ. Նշանածիդ հետ, ոյնպէս չէ՞: Դրացիին
սպասուհիին հետ նշանուիլու, կործեմ մեզի բաւական
սուլի պիտի հասի: Ալ բանդ գործդ ձգոծ, ամբողջ
օրը պատուհանէն չես զատուիր կոր:

ԹՐԱ. Ախ էֆէնախն, ներոզամիտ եղէք. ի՞նչ
ընեմ, ձեռքս չի: Նշանուած ըլլալը շատ համով բան
է եղեր:

ՄԿՐ. Համը շատ շուտ հասկցեր ես: Բաէ՛ նայիմ,
նշանածիդ անունը ի՞նչ է:

ԹՐԱ. Թագուհի:

ՄԿՐ. Ազուոր անուն:

ԹՐԱ. Կինման աղջիկ է, էֆէնախն: Թուղթուոր-
ներու աղժանի թաղաւի մըն է:

ՄԿՐ. Մերինները գեռ չեկա՞ն:

ԹՐԱ. Ո՞չ:

ՄԿՐ. Եղբա՞յցը:

ԹՐԱ. Ո՞չ: Պարոն Սերո՞բն ալ եկեղեցի գնաց:

ՄԿՐ. Ո՞չ: Անձական գործի մը համար; Կործեմ
մէկու մը հետ ժամադրութիւն ունէր: Պէտէքը շատ
նեղե՞ց քեզի:

ԹՐԱ. Երբէ՞ք: Երկու ժամուան մէջ հազիւ մէկ
անգամ լացաւ: Ասանկ հրեշտակի պէս պէտէք ունե-
նալը, մարգուս համար գանձ է գանձ: Քնացաւ: Եր-
թամ անկողինին վրայ գնեմ: (Անենակ կը մտնէ):

ՄԿՐ. Ոտքի ձայն եկաւ ականջիս: Ո՞վ է արդ-
եօք: (Թորոս սենեակին կ'ելլէ). Թորո՞ս, նայէ ո՞վ է
եկողը:

ԹՐԱ. (մէջտեղի դուռնեն նայելով). Պարոն Սե-
րոբն է:

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆԻ — ՍԵՐՈԲ

ՍԹԲ. (մտնելով). Բարեւ ձեզ: Ինչպէս ես եղբայր,
լո՞ւ ես:

ՄԿՐ. Երեկուան վրայ աւելի լու եմ: Ոսկորնե-
րսւ ցաւը բաւական նուզած է: (Թորոս սենեակը
կարգի դնելով կը զբաղի):

ՍԹԲ. Ալ ուրիշ անգամ կրկնելու պէտք չունիմ:
Քու միակ զարմանդ բանի մը վրայ չի մտածելն է:

ՄԿՐ. Ես ալ անանկ ընել կը մտածեմ կոր, բայց
չըլլար կոր:

ՍԹԲ. Պէտք է որ ըլլայ: Ի՞նչ ունիս մտածելիք:
Փա՛ռք Ասաուծոյ, ես գեռ ողջ եմ: Փաշայի պէս փե-
սայ մը ունիս, հրեշտակի պէս ալ աղջիկ մը: Հապա թոռ-
նիկ... Ալ ի՞նչ կը պակսի քեզի երջանիկ ըլլալու
համար:

Մկր. Միքայէլը տեսո՞ր։ Ի՞նչ ըրու։ զործը կարգադրեց։

Մրբ. Ի՞նչ պիտի կարգադրէ։ Քիթը բերոնը դարձուցիր է։

Մկր. Տեսա՞ր մի ետ։ Ա՛յ քեզի փորձանք մը ևս։

Մրբ. Վրան չեմ մասնակը իսկ։ Իշ օլոճարնու վարը։ Միքայէլէն բաժնուեցայ, եկեղեցի գացի։ Հոգաբարձու աղաները ամէնքն ալ հոն էին։ Մինակ Տրդատ էֆէնտին պակսու էր։ Գիտե՞ս թէ ինչ եր իրենց խօսակցութեան նիւթը։

Մկր. Ի՞նչ։

Մրբ. Տրդատ էֆէնտին երէկ տեարակները դաստարն յանձներ է և կառաջարութիւնն ալ անմիջապէս խանութը կարմիր մոմով կ'ոքիր է։

Մկր. Երա՞ւ կ'ըսն Մերու։ Է՛յ, հիմա կը խենթենամ։

Մրբ. Ինչու այդքան կը զարմանա։ Օր մը չէ օր մը ըլլալիքը աս էր արդէն։ Անհաշիւ զործին վախճանը աս է։ Ես այս բանը քեզի ըսել անգամ չէի ուզգեր, բայց գիտութեանոր կերպով ըսի, որպէսզի հասկընա և համազուիս որ գեռ քենէ պէթէրները կան։ Վաղը. Տրդատը երեսը անգամ նոյցով չպիտի ունենայ. պէտքի ալ պիտի մուրայ։

ԹրԱ. Հէմ ալ արժանի է։ Գրապանը երկու փարամտաւ նէ, նէ՞ օլուում աէլիսի եղաւ։ Ամէն բան մոռցաւ. Աստուածն ալ, խիզն ալ, խեզն ալ, կարօնն ալ։ Օ՞խ, միւսթահանին է։

Մկր. Աս ի՞նչ կը նշանակէ։ Գուն ուրիէ կը ձանչնոս Տրդատ էֆէնտին։

ԹրԱ. Կը ձանչնոս էֆէնտիս և շտու լու կը ձանչնոս։ Անունս աէրակմ երած է ամա, իմ աչքէս և աշկանչէս բան չի փախիր։

Մրբ. Բոել է բան մը զիտես իր մասին։ ԹրԱ. Բան մը չէ, բաներ։ Հիմա ես ձեզի մէկ հատը ըսեմ և գուք անմիջապէս կը հասկնաք անոր ինչ ըլլալը։

Մկր. Միսալ բան մը իմացած չըլլաս Թորոս։ ԹրԱ. Ոչ էֆէնտիս ոչ բան մը, որուն ես անձամբ ներկայ եղած մմ։ Աս աչքիքովս տեսայ և ականջներովս լսեցի։ Կը յիշէ՞ք, անցեալ տարի գանձումի մը համար, զիս կուռնելիսս էֆէնտիին զրկած էիք։ Երբ իր մօտ առաջնորդուեցայ, տեսայ որ Տրդատ էֆէնտին ալ հոն էր, ինչպէս նաեւ Ազքատախնամ մարմինէն երկու անգամներ ալ։

Մկր. Է՛յ . . .

ԹրԱ. Ազքատախնամի անգամները եկած էին կարօտելներու համար զրամ հաւաքելու։ Կուռնելիսս էֆէնտին, առանց մարդիկը շատ յոզնեցնելու, անմիջապէս զրամարկզը բացաւ և տասը ոսկի նուիրեց։

Մրբ. Աֆէրիմ կուռնելիսս էֆէնտի։

ԹրԱ. Կարգը եկաւ Տրդատ էֆէնտին։ Մարդիկը երկու ժամ քարոզ կարգացին, գութ շարժող բաներ ըսին, ազքատ ընտանիքի մը նոյն գիշերը անօթիպատկիլը մէջ բերին, բայց . . . ընը . . . (ձեռքը սեղանին զարնելով). Նո՞ւ, եթէ առ փայտին կտորը խօսք կը հասկնայ նէ, ա՞ն ալ կը հասկնայ։

Մկր. Է՛յ, վերջապէս բան մը տուա՞ւ։

ԹրԱ. Բան մըն ալ չտալէն ետքը, ի՞նչ պատասխանէ աղէկ։ Մերին տէրտը մեզի բաւական է, աղքատներով զբաղելու ժամանակ չունինք։ Ի՞նչ ըսել է էֆէնտիմ, թոզ երթան աշխատին հացերնին ձարեն ըսաւ։ Ատենապէտ էֆէնտին, որ պատկառազդու մարդ մըն էր, քաղաքալար կերպով հասկցուց Տրդատ էֆէնտիին թէ այդ կարօտելներուն մէջ ծերեր և անկար-

Աեր կան . իսկ եթէ աշխատելու պատրաստակամեր ալ գտնուեն , անսոնց ալ գործը կը պակսի :

Մկր . Է՛յ , ատոր ի՞նչ պատասխանեց :

ԹԲՍ . Մեր ընելիք օգնութիւնը , ատանկներուն տեսակ մը քաջալերական է : Թող անօթի մնան էֆէնտիմ , չըսէ մի :

ՄՐԲ . Վա՛յ սարսափելի մարդ :

Մկր . Ծո աս ի՞նչ անխղճութիւն :

ԹԲՍ . Եթէ անօթի մնալը տյդքան դիւրին բան է , քանի մը օրուան համար թող ինքն իր վրայ փորձէ : Փորբ կուշտ , կռնակը տաք , ճառթ ճուռթ նետելը ամէն մարդ ալ կրնայ ընել :

Մկր . Շիտակը հաւատալս չիգար կոր :

ԹԲՍ . Հաւատացէ՛ք էֆէնտիս հաւատացէ՛ք : Հսածս ոչ բանբաստնք է և ոչ ալ պատմուածք , այլ կառորեալ իրողութիւն : Է՛ն , խուրպան ըլլամ Աստուծոյ զօրութեանը , ուշ կամ կանուխ արդարօրէն պատշաճը կը անօրինէ :

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ — ԱՆԱՀԻՑ — ՎԱՐԴՈ

ԱՆՀՏ . (Չեռքեցին մելմեկ ծաղկեփունչ , ամուսնոյն հետ կը մտնեն : Անամիտ որ լամ եր Թորոսին վերջին խօսերը) Նորէն ի՞նչ կը ճառես թորոս : Կ'երեւի մուսաներդ եկած են :

ԹԲՍ . Եկող գացող չիկայ տիկին , բայց երբեմն ինձի պէս սէրսէմերը հոետորներ կը դառնան , մտնաւանդ երբ չսիրած մէկու մը մասին խօսին :

ԱՆՀՏ . Բարեւ հայր :

ՎԲԴ . Բարեւ պապու : (Երկուքն ալ Մակարի ձեռքը համբուրելով փունջերը կը ներկայացնեն):

ՄԿՐ . (գոհ եւ զուարդ , ծաղկեները հոտոտելով) . Ի՞նչ անուշ նոտ , ի՞նչ հիմնալի ծաղիկներ :

ԱՆՀՏ . Շիտակը հայրիկ , մեր ծաղկեվաճառը ճաշակաւոր և փորձառու մարդ է : Պարաէզ մը ունի որ մարդս հիմնութով կը դիմէ : Մարդը տարիներ բռւսաբանութեան հետեւէր և այս գործին մասնագէտը եղեր է : Պալտահին ալ հայթայթիչն է գիտե՞ս հայր :

ՎԲԴ . Աս ծաղիները սիրելի հայրիկ , մեր խնդակցութեան և երախտիքի անկեղծ արտայայտութիւնն է : Մենք մեր բոլոր սրառվը կը մաղթենք որ դեռ երկար տարիներ տպրիք և մեզի հովանաւորէք ձեր թանկագին գոյութեամբը :

ՄԿՐ . (Զափազանց յուզուած) . Շա՛տ ապրիս փեսաս : Ի՞նչպէս կը տեսնէք , ուրախութենէս կ'արտառւեմ : Այս արցունքներս թող իմ հայրակ մն սրառարութարցունք թունութեանցս թարգանը ըլլան :

ՍԲԲ . (ցած ձայնով Թորոսին) . Կը տեսնե՞ս թորոս , թէեւ ձկնորսի մը զաւակ է , բայց ի՞նչ վեհ զգացումներ ունի :

ԹԲՍ . Մեղք որ ես ալ տիրոջս նուէր մը չի կրցի բերել :

ՍԲԲ . Աղէկ միտքս ձգեցիր : Նուէր մըն ալ ես առած եմ , գրպահս մոսցայ : Տրգատին պորտպան զիս չուարեցուց :

ԱՆՀՏ . (Վարդօին հետ ունեցած անձայն խօսակցութիւնը ընդիմանելով) . Հայրիկ , Վարդօն իր կողէնքն քեզի պղտիկ նուէր մը պատրաստած է , ինձի առւաւ որ քեզի յանձնեմ : (Քեհքի Ֆօնսիկ մը կուտայ) :

ՄԿՐ . Ի՞նչ է աս աղջիկս :

ԱՆՀՏ . Քրէտի Ֆօնսիկ մը : Կը մաղթենք որ առաջին պարգիւն ալ շահիս :

ՄԿՐ . Շնորհակալ իմ աղջիկս : Ես արդէն շահելիքս

շահեր եմ։ Վարդօի պէս փեսայ մը ունենալը, արդէն
Քրէտի Թօնսիէին առաջին պարզեւը շահիլ ըսել է։

ՄՐՅ. (Թորոսին պղտիկ տուփ մը տալով). Տուր,
իրեն տուր և ըսէ որ քու կողմէդ է այս նուէրը։
ԹՐՍ. Մէջը ի՞նչ կայ։

ՄՐՅ. Սիկարէթի արծաթ տուփ մը։

ԹՐՍ. Զեր անունով տամ աւելի լաւ չըլլա՞ր։

ՄՐՅ. Ի՞նչ որ կ'ըսեմ ան ըրէ։ Ես ուրիշ առթիւ
նորէն պարտքս կը կատարեմ։

ԹՐՍ. (Մակարին ուղղուելով). Յարգամեծա՛ր
տէրս։ Այսօր ամենուս համար ալ խիստ հաճելի և
ուրսիստիթ օր մըն է։ Զեր ծննդեան վաթսուներորդ
տարեղարձը։ Որպէս նուէր, Աստուած ձեզի հրեշտակի
պէս թոռնիկ մը տուտւ։ Ճեր աղջիկն ու փեսան ծա-
ղիկներ մատուցին. իսկ ես՝ ձեր խոնարհ ծառան, խոր
երախտագիտութեամբ կը համարձակիմ ոս պղտիկ
նուէրը ընել ձեզ։ (Տուփը կուտայ)։

ՄԿՐ. Ի՞նչ է աս Թորոս։ (Կը բանայ, կը նայի եւ
գոնի մնալով). Շնորհակալ եմ։

ԹՐՍ. Զեջին բան մը։ Կը խնդրեմ որ իբր յիշա-
տակ պահէք զայն։

ՎՐԴ. Կը տեսնէ՞ք, Թորոսը որքան փոխուած է։
Եթէ մօտէն ճանչցած չըլլայինք զինքը, անպայման
հսեսոր մը պիտի կարծէինք։

ԹՐՍ. Նշանուեցայ, խելքս գլուխս եկաւ։ Երբ
վաղը ամուսնուամ, չպիտի ճանչնաք զիս։

ՄԿՐ. Աղջիկս, այսօր օտար հրաւիրեալներ ալ
պիտի ունենո՞նք մեզի սեղմանակից։

ԱՆՀՏ. Ո՞չ հայր, մենք մեզի ենք։

ՄԿՐ. Աւրեմն կրնա՞մ առաջարկ մը բերել։

ԱՆՀՏ. Բայ հայր, ի՞նչ կը փափաքիս։

ՄԿՐ. Կուզեմ որ Թորոսին նշանածը այս ցերեկ
մեզի հետ ըլլայ և մեզի սեղմանակից։

ԱՄԵՆՔՆ ԱԼ. (Ուրախութեամբ). Այս՛, լաւ կ'ըլլայ։
ՎՐԴ. Հիանութիւ գաղափար։

ԹՐՍ. Աս ի՞նչ մեծ պատիւ է որ կ'ընէք ինծի։

ԱՆՀՏ. Այս՛ Թորոս, լաւ կ'ըլլայ։ Այսպէսով թէ՛
նշանածդ մօտէն տեսած՝ և թէ իրեն հետ ալ ծանթա-
ցած կ'ըլլանք։

ԹՐՍ. Խնդիր է թէ այսօր պիտի կարենա՞յ դուրս
ելլել։

ՄՐՅ. Եթէ կարեւոր պատաժառ մը ունի, հոգ չէ,
ուրիշ օր մը կուգայ։

ԱՆՀՏ. Եթէ ազատ է, գնա շուտ զինքը հոս քեր։

ԹՐՍ. Անմիջապէ՛ս տիկին։ Եթէ գահաժառանգը
ուղէք, ներսը մահճակալին մէջ մըշը մըշը կը քնա-
նայ կոր։ (Կելլէ)։

ՎՐԴ. Քիչ առաջ կատակ չէր ըրածս։ Հաւատացէք
որ այս մարդը նշանուելին յետոյ բոլորովին փոխու-
ցաւ։ Շիտակը շատ կը սիրեմ զինքը։

ՄԿՐ. Այս՛, ես ալ կը սիրեմ, լաւ խմոր է, հա-
ւատարիմ է, բայց երբեմն ալ շատ ցաւագար գործեր
ունի։

ՎՐԴ. Ունէր պիտի ըսենք, քանի որ այժմ ուղ-
ղուած է։ (Սերովին մօտենալով). Իսկ գուք սիրելի
հօրեղբայր, ի՞նչպէս անցուցիք օրերնիդ։

ՄՐՅ. Մէկ երկու բարեկամներու հետ շատախօ-
սութիւն, յետոյ եկեղեցի և յետոյ տուն։

ԱՆՀՏ. Դեղդ առի՞ր հայր։

ՄԿՐ. Դեռ ո՞չ։ Ժամը քանի՞ն է։ (Ժամացոյցը
նայելով). Այս՛, ասանըմէկն է. առւր տեսնեմ աղջիկս։

ԱՆՀՏ. (Դեղը դզալին մէջ լեցնելով հօրը կը մօ-
տենայ). Բաց բերանդ հայր։

ՄԿՐ. Ի՞նչ, մե՞նք ալ պէպէք եղանք։

ԱՆՀՏ. Այս՛. Ալ հիմա դերերը փոխուած են։ Ես

մայրիկ եմ, գուն ալ պէպէքս։ (Թեղը խմբնելի լեսոյ)։
Քիչ մը ջուր տոմ հայր։

Մկր. Ո՞չ աղջիկս, արդէն շատ քաղցր և շատ ալ
համով գեղ մըն է։ Եթէ դգու մըն ալ տառ, չե՛ չպի-
տի ըսեմ։

ՎՐԴ. Անոնիմ, պէպէքը ո՞ւր է։

ԱՆՀՏ. Ներսը կը քնոնայ, Բա՞ն մը կ'ուզես։

ՎՐԴ. Ո՞չ, եթէ արթուն ըլլար, քիչ մը պիտի
սիրէի։

ԱՆՀՏ. (Թորոս կը մտնէ). Եկա՞ր Թորոս, ի՞նչ լուր։

ԹՐՍ. Պիտի գոյ տիկին, բայց քիչ յետոյ։ Աշ-
խատանքի հագուստով գուլ չուզեց, քիչ մը պիտի
զարգարուի և այնպէս պիտի գոյ։

ԱՆՀՏ. (կատակելով). Աչքիդ աղուոր երեւնալու
համար, այնպէս չէ։

ԹՐՍ. Ո՞չ տիկին, ձեզի յարգած ըլլալու համար,
Ան արդէն սրախս մէջ իր որոշ տեղը գրաւած է, նոյն
իսկ խոհանոցի հագուստով։

ԱՆՀՏ. Շատ կը սերե՞ս զի՞նքը Թորոս։

ԹՐՍ. Խենթի պէս։ Ախս տիկին, աս աղջիկը
Աստուած հանեց դիմաց։ Եթէ գիտնաք ի՞նչ ազնիւ
քնաւորութիւն ունի և որքա՞ն բարի է։ Բաւական ալ
զարգացած է։ Պարտիզակի Ազգային վարժարանը
աւարտած է։ Մայրենի լեզուն լու կը գրէ ու կը խօսի։
Զուրի պէս յունարէն գիտէ։ Ասկէ զատ լու ձայն ունի
և լու ալ պարել գիտէ։

ՄՐՅ. Թորոս, կեանքդ այնքան գոհունակ կը պատ-
մես կոր որ, իմ ալ նշանութիւն կուզայ կոր։

ՄԿՐ. Ի՞նչ կ'ըսես Սերո՞ր, արդեօք ես ալ ամուս-
նանա՞մ։

ԹՐՍ. Այո՛, հաւասացէք ըստածներուս։ Եթէ վաղը
միւս օր ամուսնանամ, պիտի տեսնէք թէ սրբան եր-
ջանիկ տուն մը պիտի կազմեմ։

ՎՐԴ. Ատիկո մեր ամենուս ալ փափաքն է։

ԹՐՍ. Յիսուն ոսկի ալ գրամօժիտ տալ ուզեց,
խնայած գրամը, բայց ես մերժեցի։

ԱՆՀՏ. Ինչո՞ւ Թորոս։

ԹՐՍ. Եթէ քովս գրամ ըլլայ, կրնայ ըլլալ որ
բացէն առեւտրական գործի մըն ալ ձեռնարկեմ և ան-
յաջողութեան մասնութիմ։ Այն ատեն պիտի ստիպութիմ
տետրակներս գատարան յանձնել և հանգիստ ալ խռո-
վել։ Լու է որ գրամը իր քովը մնայ, ապագային
կրնանք հազար տեսակ ձախորդութիւններու բաղիւթի։

ՎՐԴ. Կը գնահատեմ քու առողջ մտածումդ Թո-
րոս։

ԹՐՍ. Եւ յետոյ, գրամը երբ կանանց քովը ըլլայ,
հոգինին կ'ելլայ, բայց գրամ չելլար։ Կինը ինձի հա-
մար պահքայէ մը տւելի տպահով է։

ԱՆՀՏ. Կը ահանհօ Վարդօ, Թորոսը ի՞նչ տարօ-
րինակ մտածումներ ունի։

ԹՐՍ. Ինչո՞ւ տարօրինակ ըլլայ տիկին։ Հաւա-
տացէ՛ք եթէ մայրս չըլլար, հայրս հապը շատո՞նց
կլլած էր։

ՄԿՐ. Հիմա համոզուեցայ Թորոս որ քու այս
նշանառութեան քեզի մէծ օգտակարութիւն ունեցած է։
Այո՛, երբ վաղը ամուսնանաս, ամենուս ալ դաս պի-
տի տաս։

ԹՐՍ. Քաւ լիցի է Փէնտիս։ Ոտքի ձայն տոի,
արդեօք նշանա՞մ է։ (Մկանը կ'ելլէ)։

ՄՐՅ. Թորոսին ըստածները կարծես շատ ալ պարապ
բաներ չեն։ Մարդուկը ամէն բան լաւ ուսումնասիրեր
է։ Ասանկները երբեք թշուառ չեն ըլլար կեանքեր-
նուն մէջ։

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆ Փ — ԹՈՐՈՍ — ԹԱՐԱԿԱՀԻ

ԹԲՄ. (Թագուհի մաքուր հազուած է: Ճերմակ պօնէ եւ գոգնոցով). Մտի՛ր հոգեակս, նազ մի ըներ: Մեր հանըմբ և էֆէնտին, պարզ և պատուական մարդիկ են:

ԹԳՀ. (ամշեն եւ նազանեով մը կը մտնէ). Բարեւ ձեզ:

ԱՆՀՅ. Բարի եկար աղուոր աղջիկ: (Մօննալով). Տուր ճեռքդ տեսնեմ: (Ձեռքը ձեռքերուն մեջ կ'առնե: Թագուհի անոււ նայուծք մը կը նետէ սիկինին). Աս ի՞նչ անուշիկ աչքեր ունիս:

ԹԳՀ. Զիս կը չփացնէք տիկին:

ՎՐԴ. Հապտ հասակը, շարժուձեւերը, վայելուչ հագնուածքը: Պուալօ՛ թորոս, կը գնահատեմ ճաշակդ:

ԱՆՀՅ. Շատո՞նց է որ մեզի գրացի ես:

ԹԳՀ. Գրեթէ երկու տարի:

ԱՆՀՅ. Գո՞ն ես տէրերէդ:

ԹԳՀ. Չափազա՞նց: Անոնք հայրիկ և մայրիկ ան ինձի համար:

ԱՆՀՅ. Երբէք ուշագրութիւն չէի ըրած թէ աւսանկ սիրունիկ գրացուհի մը ունիմ:

ՄԿՐ. (կատակելով). Անոր ալ թորոսը ուշագրութիւն ըրեր է:

ԹԲՄ. Երբէք տէր իմ: Խըսմէթը ասանկ է եղեր:

Տառը վայրեանի մէջ կարգագրուած գործ մը:

ՄԲԲ. Ինչ որ ալ ըլլայ, կը մազթիւնք որ իրար լոււ հասկնաք և երջանիկ կեանք մը ունենաք:

ԹԲՄ. Ամէն: (Թագուհիին). Ամէն ըսէ աղջիկ:

ԹԳՀ. Կ'ամաչեմ:

ԹԲՄ. Հոս ամշնալու ի՞նչ կայ: Ամէնը ամենուն համար է: Ամէն ըսէ որ երջանիկ ըլլանք:

ԹԳՀ. (ակնածանօֆ). Ամէն:

ԹԲՄ. (ցած ձայնով Թագուհիին). Ամենդ սիրեմ, հոգիս:

ԱՆՀՅ. Անունդ Թագուհի է այսպէս չէ՞:

ԹԳՀ. Այո՛:

ԱՆՀՅ. Հայերէն լոււ գիտես եղեր:

ԹԳՀ. Այո՛:

ԱՆՀՅ. Բաւական սահուն յունարէն ալ կը խօսիս եղեր:

ԹԳՀ. Այո՛:

ԱՆՀՅ. Երգելու համար լոււ ձայն ունի՞ս:

ԹԳՀ. Այո՛:

ԱՆՀՅ. Իսկ պարելու համար ճկուն ոտքեր:

ԹԳՀ. Այո՛:

ՄԿՐ. Անուշիա, աղջիկս, անսնկ ըաներ կը հարցնես որ խեզը «այս»էն զատ ուրիշ պատասխան տըւած չունի: Փոխէ՛ խօսակցութեան ձեւը որ սա աղջկան ձայնը իմանանք:

ԹԲՄ. Այդ պաշտօնը ինձի տուէք էֆէնտիս, ես անիւտ խօսեցնելու միջոցը գիտեմ:

ՄԿՐ. (Թորոսին). Խօսէ տեսնենք:

ԹԲՄ. Թագուհի, հոգեակս, ինձի հանդէպ միշտ պարտաճանաչ պիտի ըլլա՞ս:

ԹԳՀ. Անշուշտ:

ԹԲՄ. Զիս լքելով ուրիշի մը հետ պիտի ամուսնանա՞ս:

ԹԳՀ. Երբէք:

ԹԲՄ. Խօսքերուս և խորհուրդներուս պիտի հակառակիս:

ԹԳՀ. Երբէք:

ԹԲՄ. Ամուսնանալէ յետոյ, պատահի որ գիշեր ճը գիսով տուն վերագառնում, պիտի բարկանա՞ս:

ԹԳՀ. ԵՐԲԷՔ :

ԹԲՄ. ԵՐԲ ՀԻւանդանում, զիս հիւանդանոց պիտի
ղրկե՞ս :

ԹԳՀ. ԵՐԲԷՔ :

ԱՆՀՏ. Խեղճ աղջիկ, հարցաքննիչ գտառաւորի մը
պէս քեղի բաւական նեղեցինք :

ԹԳՀ. ԵՐԲԷՔ ափկի՞ն :

ԹԲՄ. Սաւրբ պատկէն յետոյ, մինչեւ զերեղման
ինծի հաւատարիմ որոշի մնա՞ս :

ԹԳՀ. (որ Տիկինին միջամտորենին տարուած էր).
ԵՐԲԷՔ :

ԹԲՄ. Հէ՛, ի՞նչ ըսիր: (Ամենքն ալ կը խնդան):

ԹԳՀ. ԵՐԲԷՔ ըսիր: Խոկ գուն ի՞նչ ըսիր:

ԹԲՄ. Քանի որ չիմացար ըսածս, ինչո՞ւ պատառ-
խանեցիր:

ԹԳՀ. Ուշագրութիւնս տիկինին դարձուցած էի,
ըսածդ լաւ չիմացայ:

ԱՆՀՏ. Այս՝, այս՝, քիչ մը խօսքի բանեցի զի՞նքը:

ՎԲԴ. Հիմա զգենք այս անտեղի հարցումները և
մեր գործով զբաղի՞նք: Թագուէնի՛, անշուշտ Թորսը
ըսաւ թէ այսօր մեր սիրելի հայրիկին ծննդեան վաթ-
սուներրորդ տարեկարձն է: Այս բարեբաստիկ առի-
թով, փափաքեցանք որ գուն ալ մեզի սեղանակից
ըլլաս:

ԹԳՀ. Զափազանց ազնիւ էք պարոն: Միծ պատիւ
է որ կ'ընէք ինծի: Ասկան կը ցաւիմ որ պարտակա-
նութեանս մէջ թերացած եմ:

ԱՆՀՏ. Ինչո՞ւ Թագուէի:

ԹԳՀ. Արովհետեւ իթէ երկու օր առաջ գիտնայի
այսօրուան արժէքը, այն առեն, ես ալ իմ կարգիս
նուէր մը կը պատրաստի, իմ անկեղծ երախտիքս
յայտնելու համար: Առանց մօտէն ճանչնալու, ես ալ

հայրիկը շատ կը սիրեմ, որովհետեւ Թորոս իր բարե-
մասնութեանց մասին յաձախ խօսած է:

ՎԲԴ. Շատ ապրիս աղուոր աղջիկս: Կը գնահատեմ
այդ աղնիւ զգացումդ: Յաւիսեան երջանիկը ըլլաք:

ՎԲԴ. Ամէնքս ու կը ձայնակցինք հայրիկին բա-
րեմազթութեանց: Եթէ կը թոյլատրուի ինձ, առա-
ջարկ մը ունիմ ընկելիք:

ԱՄԷՆԲԸ. Այս՝, այս՝:

ՎԲԴ. Թագուէիին այսօր մեզի հետ ճաշելու պա-
րագան անտեղնկալ մըն էր թէ՛ մեզի և թէ իրեն հա-
մար: Եթէ կ'ուզէ որ Թագուէին ո և է կերպով գոհա-
ցում պատճառէ հայրիկին, ճաշասրան իջնալէ առաջ,
կրնայ ան մեզի իր անուշ ձայնովը երգ մը երգել, և
կոմ իր ճկուն սաքերովը պար մը պարել:

ԱՄԷՆԲԸ.— Հիմանալի՛ գաղտնաբար:

ՎԲԴ. Բնատրութիւնը իրեն կը ձգենք, կ'ուզէ կը
պարէ, կ'ուզէ կ'երգէ: Թորոս, անշուշտ ներողամիտ
կ'ըլլաս այս առաջարկը բերելուս: Ասիկա միջանկեալ
բան մըն է որ ամինուս ալ հաձոյք պիտի պատճառէ:

ԹԲՄ. Ի՞նչ ըսկմ էքինախիս: Առաջարկ մը որ իմ
սրախ ալ կը խօսի: Օ՞ն ուրիմն Թագուէի, կ'ամ պար,
կ'ամ երգ ... ո՞րը կը հոփիլնորիս: (Թագուէի խանոն
երեւոյը մը կ'առնի): Եազ մի ընկը հոգիս: Հօէ տեսնեմ,
պարե՞լ կ'ուզես թէ երգել:

ԹԳՀ. Կ'ամընամ:

ՎԲԴ. Ամէնալու բան չիկայ աղջիկս: Այսօր հսա
ամէնքս ալ հաւասարներ ենք: Պիտի ուտենք, պիտի
խմենք և պիտի զուտրճաննք: Երբ պարտականու-
թեան ժամը հնչէ, ամէն մարդ իր գործին գլուխը
կ'անցնի:

ԹԲՄ. Իմացա՞ր պարոնին ըսածը: Շուշտ որոշումդ
տուր:



Ակտացանված է 1957թ.

ԹԳՀ. Կը պարեմ:

ՎՐԴ. Հոս շատ մը տիսքեր ունինք, որոնց մէջ
հիանալի պարեր ալ կուն: Կեցէք որ հատ մը ընտրեմ:
(Ֆօնօկրաֆին կը մօտենայ եւ կ'սկսի տիսերը խառնել):

ԱՆՀՏ. (Խօրը մօտենալով). Գո՞հ ես հայր:

ՄԿՐ. Այսքան գոհ, որ չեմ կրնոր բացատրել:
Ուրախութենէս ախորդակս ալ բացուեցաւ: Երբ սեղաւ
նին գլուխը անցնիմ, եղածը չեղածը պիտի լափեմ:

ԱՆՀՏ. Ուզածիդ չափ կեր հայր, անուշ ըլլայ:

ՎՐԴ. Ահա՛ հիանալի կտոր մը: (Ֆօնօկրաֆը կը
լարէ եւ տիսէր կը դնէ):

ԹԲՄ. Ամէնքն ալ քեզի կ'սպասեն թագուհի: (Թա-
գուհի նազանենով եւ խնամքով կ'սկսի պարել: Ամենքն
ալ հիացումով կը դիտեն: Մակար, պարի ընթացքին,
բարձրաձայն կը խօսի):

ՄԿՐ. Ասկէ ետք, աղջիկ ունեցող բարեկամներուս,
ձայնս հասածին չափ պիտի պօռամ և պիտի ըսեմ.
«Բարեկամներ, դիրք կամ դրամ մի փնտուեք: Դրամը
կը կորսուի, դիրքը կը խախտի, բոյց մարդը կը
մնայ: Արժանաւորին տուէք ձեր աղջիկը, հոգ չէ թէ
ան ըլլայ աղքատ: Տուէ՛ք, ահա՛ ընտանեկան երջան.
կութիւնը:

ՎԱՐԱԳՈՅՐ ԵՒ ՎԵՐԶ



ՀՀ Ազգային գրադարան



NL0358714

47597

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԸ

Գիշերազգեսթը	կատակերգ.	2	արար	զին	Ե.Դ.	5
Վարձուած սենեակը	"	1	"	"	"	2
Կուգայօր մը որ... բարոյալից թՏ. 3	"	"	"	"	"	10
Ես միշխ փոխեցի կատակերգը.	3	"	"	"	"	5
Նաև ապրիս փեսաս, տամ-կատկ.	3	"	"	"	"	5

ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐ

Մօսային փորձա՛կները	կատակերգ.	3	արար			
Պայրախտար կեսուրը	"	3	"			
Քառակուսի զլուխներ	"	3	"			
Եղիպտահայ թատրոնը	"	4	"			
Ապտիւլ Համբ'ս եւ Շենդ Հօլմս (Ե. Օքեանի մեծ վեպ'ն թատր.)		5	"			

ԳԻՆ 5 Ե. Դ.

3